17 ՓԵՏՐՈՒԱՐ 1994 ՀՐԱՊՇԱԲԹԻ # 29 (532)

Azg
Azg
armenian daily

Վերջնագրի ժամկետը չի երկարաձգվի

ՓԱՐԻԶ, 15 ՓԵՏՐՎԱՐ, ՈՒԱ ՍՆԱՐՔ: Ֆրանսիայի վարչապետ էդուար Բալադյուրը, ելույթ ունենալով «Ճշմարտության ժամ» հեռուստածրագրով, նախազգուշացրել է, որ բոսնիացի սերբերին հայտարարված վերջնագրի ժամկետը «ոչ մի օրով չի երկարաձգվի»: Միաժամանակ Ֆրանսիայի վարչապետը հույս է հայտնել, որ հակամարտությունը խաղաղ վախճան կունենա, «եթե մարտնչող կողմերը վերադառնան բանակցությունների սեղանի շուրջը»: Սարաեւոյի շուկայում տեղի ունեցած պայթյունից հետո ՆԱՏՕ-ն ներկայացրել է մի վերջնագիր՝ օդային հարվածներ հասցնելու սպառնալիքով, պահանջելով մինչեւ փետրվարի 21-ը սերբական հրետանին 20 կմ հեռավորությամբ հետ քաշել Սարաեւոյից:

ՆԱՏՕ-ի ռմբահարվածները չեն օգնի խաղաղական կարգավորմանը

ՄԱԿ, 16 ՓԵՏՐՎԱՐ, ԻՏԱՐ-ՏԱՍՍ ԱՐՄԵՆՊՐԵՍ: Բոսնիայում ՆԱՏՕ-ի օդային հարվածները չեն օգնի բոսնիական խնդրի խաղաղական կայուն կարգավորմանը: Դրանք լոկ ի չիք կդարձնեն հաշտության բանակցությունների ընթացքում ձեռք բերված արդյունքները: Այդ մասին հայտարարեց ՄԱԿ-ում Հարավսլավիայի Միութենական Հանրապետության մշտական ներկայացուցիչ Դրագոմիր Ջեկիչը, ելույթ ունենալով ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում Բոսնիայի իրադրության շուրջը կայացած վիճաբանությունների ժամանակ:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

Հանձնաժողով այդպես էլ չստեղծվեց

Օրական 60 կով ներքգործնախարարին

ԱՐՄԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ. Ինչպես եւ գուշակել էինք, երեկ կայացած բուռն քննարկումների ընթացքում Գերագույն խորհուրդն այդպես էլ որոշում չընդունեց պաշտոնաթար անձանց կողմից պաշտոնական դիրքի չարաշահման դեպքերը հետաքննող հատուկ հանձնաժողով ստեղծելու վերաբերյալ, թեեւ ընդհանուր առմամբ ՀՀՇ խմբակցությունից բացի, բոլորը կողմ էին նման հանձնաժողով ստեղծելու գաղափարին՝ փոքրիկ տարբերություններով: Վերջինիս տեսակետն ընդհանրացրեց խմբակցության անունից ելույթ ունեցող Տեր Հուսիկ Լազարյանը՝ հայտարարելով, թե իրենք դեմ են, որ այս խնդիրները կոծկվեն, սակայն դեմ են նաեւ, որ ստեղծվի բազմակուսակցական հանձնաժողով, «քանի որ սա կուսակցական կամ քաղաքական խնդիր չէ»: Նույն տեսակետն արտահայտեց նաեւ ԳԽ նախագահ Բաբկեն Արարքցյանը:

Մինչդեռ քվեարկությանը նախորդած ելույթները բոցաշունչ էին: Մասնավորապես Ալբերտ Բաղդասարյանն այն կարծիքը հայտնեց, թե «մի գիժ քարը գցեց ծովը, հազար խելոք չկարողացան հանել»՝ առանց մատնանշելու, սակայն, «գժի» ինքնությունը, իսկ գործընկերոջ միտքը զարգացնելով, Կիմ Բալայանը հարցրեց (անշուշտ, հռետորական հարց), թե որեւէ նախարարի պաշտոնում նշանակելուց առաջ նրանից բժշկի թուղթ պահանջվո՞ւմ է արդյոք: Ինչ վերաբերում է Պարույր Հայրիկյանին, ապա նա չհաստատեց սահմանված 5 րոպեների ընթացքում ավարտել իր միտքը եւ լրացուցիչ խնդրեց 1 րոպե 35 վայրկյան, սակայն խորհրդարանի նախագահը կարողացավ ընդամենը 5 րոպե տեւած քվեարկության արդյունքների հիման վրա նրան սպիտակ ընդհատել ելույթը: Ինչպես:

Քվեարկության ընթացքում ամենաշատ ձայները (87) հավաքեց 6 խմբակցությունների եւ մի շարք պատգամավորների առաջարկած տարբերակը, որը, սակայն, երկրորդ ընտրության ժամանակ հավաքեց 92 ձայն (25 դեմ): Որոշումը չընդունվեց: Այլ կերպ ասած, հերթական անգամ ընդդիմությունը չկարողացավ, ունենալով ձայների հարաբերական մեծամասնություն, ընդունել բավականին կարեւոր մի որոշում: Իսկ քվեարկությունից հետո, գործի դնելով կոկորդի ողջ զորությունը, (Բաբկեն Արարքցյանը հերթական անգամ անջատել էր խոսափողը), Դավիթ Վարդանյանը հայտարարեց, թե ԱԺՄ խմբակցությունը դուրս է գալիս դահլիճից եւ նիստերին չի մասնակցի, քանի դեռ հանձնաժողովի ստեղծման հարցը լուծված չէ: Նրանց հետեւեց նաեւ Ազատ խորհրդարանականներ խումբը, որից հետո խորհրդարանի նախագահը զգալիորեն նոսրացած դահլիճին հայտարարեց, թե սա վերջնագիր է ժողովրդին եւ խորհրդարանին:

Մինչդեռ հանձնաժողովը, թերեւս կարող էր լույս սփռել բազմաթիվ հարցերի վրա: Մասնավորապես, հայտնի է, որ Ստեփան Մանուչարյանը հայտարարել էր, թե փոխադարձ բարձրաձայնումներում այնքան շուտափոխ մոսկվաբնակ մեծահարուստ հայն Կոնո Սիրադեղյանի փարիզյան զվարճանոցների վրա ծախսել է 200 հազար ամերիկյան դոլար: Իսկ դա 7 տարվա համար կազմում է օրական 30 հազար, կամ, տուկայական գներից ելնելով, 60 կով: Հետաքրքիր չէ՞ արդյոք, թե ինչպես է ներքգործնախարարը մեկ օրվա ընթացքում 60 կով

Տես էջ 2

ՂԱՐԱԲԱՂ

Թշնամու բոլոր գրոհները կասեցվում են

ՎԱՀԵՐԱ ԱՂԱՅԱՆՅԱՆ, ԱՏԵՓԱՆԱԿԵՐՏ, 16 ՓԵՏՐՎԱՐ: Շնչառած սառնամանիքներին եւ առաջ ձյունին, իրադրությունը Լեռնային Ղարաբաղի ռազմաճակատներում մնում է լարված: ԼՂՀ դաշտպանության բանակի շտաբից հաղորդում են, թե այսօր վաղ առավոտյան, մոտ ժամը 4-ին Աղդամի շրջանի արեւելյան հատվածներից ադրբեջանական բանակի կազմավորումներ ուժ տանկի աջակցությամբ անցել են լայնածավալ հարձակման Նովոզլու եւ Յուսիֆջանլի-գյուղերի հայկական դիրքերի ուղղությամբ: Ծավալվել են դաժան մարտեր, որոնց ընթացքում ղարաբաղյան ուժերին հաջողվել է ոչ միայն կասեցնել թշնամու գրոհները, այլեւ անցնել հակահարձակման եւ թշնամուն սխալել նահանջել նախնական դիրքերը: Կորուստների մասին տվյալներ ճշտվում են: Առավոտյան ժամը 8-ին թշնամու գրոհը նույն ուղղությամբ վերսկսվել է: Միաժամանակ ադրբեջանական բանակը փորձել է գրոհ ձեռնարկել նաեւ Ֆիզուլու շրջանում Աշաղի Աբդուռահմանլի եւ Մեյլիղ Ահմեդլի գյուղերի հայկական դիրքերի ուղղությամբ: Ղարաբաղյան ուժերը երկու ուղղություններով էլ կասեցրել են թշնամու գրոհը եւ հակառակորդին սխալել նահանջել: Կորուստների մասին տեղեկություններ չկան:



Հայ զինվորները ադրբեջանցիներից առգրավված տանկի վրա:

Այսօր ժամը 18-ի դրությամբ մարտեր էին ընթանում միայն Քելբաջարի շրջանի Հյուսիսում, որտեղ ղարաբաղյան ուժերը ոչնչացնում են թշնամու դիմադրության վերջին օջախները, եւ Մարտակերտի շրջանի Տոնաշեն գյուղի մերձակայքում, որտեղ ժամը 17:30 ադրբեջանական բանակը վերսկսել է գրոհը: Այս ուղղությամբ թեժ մարտերը շարունակվում են:

«Ազատություն» ռադիոկայանի ռուսական ծառայության Բաքվի թղթակիցը հայտնել է, թե իբր Քելբաջարի, Ֆիզուլու եւ Աղդամի գյուղերն են վերադառնում ադրբեջանցի խաղաղ բնակիչներ: Ըստ նույն աղբյուրների, ադրբեջանական սակրավորներն իբր ներկայումս ականազերծում են այդ բնակավայրերը: Մինչդեռ ԼՂՀ դաշտպանության բանակի շտաբից հերքել են այդ տեղեկությունները՝ հայտնելով, թե դեկտեմբերի 18-ից ի վեր ռազմաճակատի գծի էական փոփոխություններ չեն եղել:

ՀԱՄԱՌՈՏ

Պահանջում են անձնական անվտանգության երաշխիքներ

ՍԵՒԼԻՈ, 16 ՓԵՏՐՎԱՐ, ԻՏԱՐ-ՏԱՍՍ ԱՐՄԵՆՊՐԵՍ: Նիկարագուայի հյուսիսում գործող նոր կոնտրաների «Հյուսիսային ճակատ 3 80» խմբավորումը պատրաստակամություն է հայտնել դադարեցնել զինված պայքարը կառավարության դեմ, եթե խռովարարներին տվեն անձնական անվտանգության երաշխիքներ:

Մոսկվայի կաղերն ավելի ամուր են

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 16 ՓԵՏՐՎԱՐԻ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: «Ֆորին աֆերս» հանդեսի կարծիքով, Թուրքիան չի կարողանա զարգացնել բացառիկ կապերը Միջին Ասիայի հետ, քանի որ Թուրքիայի ֆինանսական եւ տեխնոլոգիական հնարավորությունները շատ սահմանափակ են միջինասիական հանրապետությունների հսկայական պահանջմունքները բավարարելու համար: Անկարան բացահայտել է, որ Միջին Ասիայի կապերը Ռուսաստանի հետ շատ ավելի ամուր են, քան Թուրքիայում սպասում էին: Հայ ադրբեջանական հակամարտությունը Միջին Ասիայի հետ ունեցած սահմանափակ հնարավորությունների օրինակ է: Ալիեւը հավանաբար սխալված կլինի հրաժարվել Թուրքիայով նավթամուղ անցկացնելու գաղափարից: Թուրքիայի քաղաքականությունն այս ուղղությամբ չափազանց զգուշավոր է:

Երկրաշարժ Սումատրայում

ՋԱԿԱՐՏԱ, 16 ՓԵՏՐՎԱՐ, ԻՏԱՐ-ՏԱՍՍ ԱՐՄԵՆՊՐԵՍ: Նախնական տվյալների համաձայն, 33 մարդ զոհվել եւ 250-ը վիրավորվել է երեքշաբթի օրն Ինդոնեզիայի Սումատրա կղզու Լամպունգի նահանգում տեղի ունեցած երկրաշարժի հետեւանքով: Սեյսմոլոգիական ցնցումների ուժգնությունն ըստ Ռիխտերի սանդղակի հասել է 6,5 բալի:

Նորին Մեծությունը համաձայն է

ՍՈՖԻԱ, 16 ՓԵՏՐՎԱՐ, ԻՏԱՐ-ՏԱՍՍ ԱՐՄԵՆՊՐԵՍ: Նորին Մեծություն Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի թագուհի Էլիզաբեթ Բ-ն ընդունել է այս տարի պաշտոնական այցով Ռուսաստան այցելելու այդ երկրի նախագահ Բորիս Ելցինի հրավերը: Այդ մասին հաղորդում է Ռուսաստանի նախագահի մամլո ծառայությունը: ■

ՀԱՅԱՍՏԱՆ

Նախագահի մոտից գաղտնի տեղեկությունները հոսում են դուրս

Երեքշաբթի, փետրվարի 15-ին, Երեւանի օդանավակայանում ձերբակալվել է մի կին, որի ղեկավարությամբ հայտնաբերված համակարգչային դիսկետների վրա գրանցված են եղել ՀՀ նախագահի աղարտատում վերջին տարիների ընթացքում կայացած խորհրդաղահական հանդիպումների վերաբերյալ տեղեկությունները: Այդ տեղեկությունները համարվում են գաղտնի եւ դրանց հրապարակումն ու դուրսբերումն արգելված է: Պարզվել է, որ դիսկետներ տեղափոխող անձը, որ մեկնում էր Մոսկվա ամուսնուն հանդիպելու, ՀՀ նախագահի աղարտատի նախկին աշխատակից Վահան Ավագյանի կինն է: Հիշեցնենք, որ Վահան Ավագյանը ՀՀ նախագահի ազգային անվտանգության գծով նախկին խորհրդական Ալոս Մանուչարյանի տեղակալն էր: Իսիֆիայրոց ասենք, որ ինքը Ալոս Մանուչարյանը նույնպես այս պահին Մոսկվայում է:

Ձերբակալման լուրը հավաստի աղբյուրներից մեզ հայտնի դարձավ երեկ: Սակայն, երբ այնուամենայնիվ հեռախոսով ուզում էինք ճշտել դրա ստույգությունը ՀՀ ազգային անվտանգության պետվարչությունում, անձամբ դրա պետ Դավիթ Շահնազարյանից, խստապահանջ հերքաղսիր անդրդվելի մնաց եւ բացի մեր անելիքների մասին մեզ «խորհուրդ» տալուց այն կողմ չանցավ: ■

Հայաստանի վարչապետը մեկնեց Մոսկվա: ԵՐԵՎԱՆ, 16 ՓԵՏՐՎԱՐ, ՄՌՄՊԷ: Այսօր կարճաժամ աշխատանքային այցով Մոսկվա մեկնեց վարչապետ Հրանտ Բագրատյանը: Ռուսաստանի մայրաքաղաքում մասնավորապես կքննարկվեն երկու պետությունների միջեւ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող տնտեսական համագործակցության հարցեր: ■

digitised by A.R.A.R.@

ՎԱՇԻՆԳՏՈՆ

Ադրբեջանը ձգտում է վերացնել իրեն տրամադրվող մարդասիրական օգնության արգելքը

ԵՐԵՎԱՆ, 16 ՓԵՏՐՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Փետրվարի 15-ին Ադրբեջանի զանգվածային լրատվության միջոցները հաղորդել են, թե Սոչիսակ տուը հանձնել է եկել օրենսդրական նախաձեռնությամբ փոփոխելու այն հոդվածի 907-ը, որը նախատեսում էր արգելել Ադրբեջանին մարդասիրական օգնության հանգանակումը: Բանի դեռ վերջինս չի վերացրել Հայաստանի տնտեսական շրջափակումը: Ինչպես Ադրբեջանի ԱԳՆ-ում կայացած բրիֆինգում հայտնել է ԱՄՆ-ի եւ Եվրոպայի երկրների վարչության ղեկավար Ադրբեջանական կողմը զանգվածային ջանքերով ձգտում էր հասնել այն բանին, որ չեղյալ հայտարարվի այս որոշումը եւ փորձում էր ՄԱԿ-ի պաշտոնական իշխանություններին խոսքեր դարձնել հայ-ադրբեջանական հակամարտության վերաբերյալ իրական տեղեկություններին: Պետդեպարտամենտը պաշտոնց այս նախաձեռնությունը, իսկ Կոնգրեսի դիրքորոշումն առայժմ հայտնի չէ»:

Նույն օրը «Ազատություն» ռադիոկայանը երեք է արձակել Բաքվի իր թղթակից Էլմիրա Ախունդովայի հաղորդումը, որը վկայակոչելով Ադրբեջանի ազգային անկախության կուսակցության մամլո կենտրոնը, հայտնել է, որ Սոչիսակ տուը պաշտոնապես դիմել է Կոնգրեսին՝ առաջարկելով վերացնել այս որոշումը չեղյալ հայտարարելու հարցը, ինչը Ադրբեջանի համար իսկական քաղաքական նշանակություն ունի: Ադրբեջանի ԱԳՆ-ում չկարողացան ոչ հաստատել, ոչ էլ հերքել այս տեղեկությունը, սակայն ասացին, որ դեռեւս վաղ է ուղղման փոփոխման մասին խոսելը, սակայն վերջին ժամանակներս որոշակի դրական առաջխաղացում է նկատվել ու հույս կա, որ ոչ հեռու առաջացում Ադրբեջանի ջանքերը շոշափելի արդյունքի կհասնեն:

ԱԶԳ

տեղական

ԹԲԻԼԻՍԻ

Հակահայ տրամադրությունները սասկանում են

«Իմ եւ էդուարդ Ամբրոսիեւիչի միջեւ հաճախ հանդիպելու բավականին լավ ախխաանմային ավանդույթ է ստեղծվել», իր անսպասելի այցը Վրաստան վրացի լրագրողներին այսպես է բացատրել Հայաստանի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը: Հայաստանի եւ Վրաստանի ղեկավարների վարչապետների մասնակցությամբ անցած հանդիպման ընթացքում հիմնականում քննարկվել են Վրաստանի եւ Հայաստանի միջեւ առեւտրա-տնտեսական դաշինքի իրագործման վերաբերյալ հարցերը:

Սակայն, ինչպես փետրվարի 14-ին հաղորդել է «Ազատություն» ռադիոկայանը, Թբիլիսիի իր ընթակցի հետ ունեցած զրույցում Շեւարդնաձեի աշխատակազմի բարձրաստիճան պաշտոնյաներից մեկը հայտնել է, թե նման անսպասելի այցի պատճառն այն է, որ վերջին ժամանակներս Վրաստանի որոշ քաղաքական գործիչներ, ինչպես նաեւ մամուլն ու զանգվածային լրատվության մյուս միջոցները ակտիվ հակահայկական քարոզչություն են սկսել ծավալել՝ պահանջելով արտաքսել հայերին Թբիլիսիից եւ Վրաստանի հարավային շրջաններից: Եւ թեեւ հակահայկական այս քարոզչությունը լուրջ չի ընկալվում Վրաստանի բնակչության կողմից, սակայն հնարավոր բուրիվանգությունից խուսափելու համար է, Շեւարդնաձեն Լ. Տեր-Պետրոսյանին հրավիրել է Թբիլիսի, հայտնել է պատշգամ:

Պնուիեստեւ, ռադիոկայանի նույն աղբյուրի համաձայն, եւ Լ. Տեր-Պետրոսյանը, եւ Է. Շեւարդնաձեն դրական են գնահատել կայացած հանդիպումը: «Այսօր մենք մեկ անգամ եւս հաստատեցինք մոտ ժամանակներս Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի եւ Ռուսաստանի ղեկավարների հանդիպումը կազմակերպելու մեր մտադրությունը, որը կոմպետ դարաբաղյան եւ աբխազական հակամարտությունների խաղաղ ճանապարհով կարգավորմանը», լրագրողներին հայտարարել է Է. Դուարդ Շեւարդնաձեն:

Շեւարդնաձեի ախխատակազմի մամուլի կենտրոնի հաղորդմամբ Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի եւ Ռուսաստանի ղեկավարների՝ «Կովկասյան ընդհանուր տուն» անվանումով հանդիպումը տեղի կունենա այս տարվա օգոստոս ամսին:

Լեւոն Տեր-Պետրոսյանի Վրաստան կատարած այցի ընթացքում համաձայնություն ձեռք բերվեց նաեւ գազամուղի վերաբերյալ: Ինչպես հաղորդում է Նոյյան Տաղանը փետրվարի 15-ին, Վրաստանի ՆԳՆ ներքին զորքերն այսօրվանից սկսեցին պատշգամել հանրապետության տարածքով անցնող գազամուղը, որով երկնագույն վառելիք մուտք է գործում Հայաստան: Այդ մասին հայտնեց Վրաստանի ՆԳՆ ներքին զորքերի հրամանատար Վլադիմիր Չիկովանին:

Նա ավելացրեց, որ վրացական ներքին զորքերը կատարելու են նորոգողների անվտանգությունը, որոնք աշխատում են Վրաստանի Սառնեուլի շրջանում, գազամուղի պայթեցված տեղամասում: Դրա վերականգնման համար կպահանջվի մոտ երկու շաբաթ: ■

Օրական 60 կով ներքին գործոց նախարարին...

Սկիզբը էջ 1

կերել, կամ ասենք, մեկ գիշերվա ընթացքում «առանձնազույցներ ունեցել» 300 թեթեւաբարո կանանց հետ: Տրամաբանության անհեթեթությո՞ւն, թե՞ անհեթեթ տրամաբանություն:

Բացի այդ, ներկայումս Ազգ Սանուցարանը գտնվում է Մոսկվայում (ըստ պատշգամավորներից մեկի՝ ապացույց, որ նա Հայաստանում Ռուսաստանի ֆաղաքականությունն իրականացնողն է), եւ չի բացառվում, որ ինչ որ մեկն էլ նրա վրա է փորձ ծախսում: Ամենացավալին այն է, որ այս խնդիրների լուսաբանման հնարավորությունը կարող է հեռաձգվել անորոշ ժամանակով, իսկ մինչ այդ Հայաստանի վայրաքիչ պատգարները կարող են հանգրվանել Ռուսաստանի կամ Եվրոպայի ամենաարբեր հիմնարկներում՝ առանց վերադարձի հույսի: ■

– Ի՞նչ կրոնական կազմակերպություններ կան Հայաստանում:

– Մեզ հայտնի կրոնական կազմակերպությունների թիվը տարբեր է 20 է, սակայն համաձայն 1991 թ. ընդունված ՀՀ «Խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին» օրենքի, որպես իրավաբանական անձ կարող են հանդես գալ միայն այն կազմակերպությունները, որոնց կանոնադրությունը ներկայացված եւ գրանցված է մեր խորհրդում: Այդպիսի կազմակերպությունները մեր հանրապետությունում 12-ն են: Հայ առաքելական սուրբ եկեղեցին, Հայ կաթոլիկ, Ռուս ուղղափառ եկեղեցիների համայնքները, յոթերորդ օրվա ադվենտիստները, հոգեգալստականներ, մի քանի տարբեր կազմակերպություններ՝ խաչիզմաթներ, Վանանդի, ինչպես նաեւ Աբովյանի եւ Նալբանդի շրջանների ավետարանի հավատի քրիստոնյաներ, եզդիների (Շաֆիադինի հետեւորդներ), հրեական (հուդայական) համայնքներ, արորդիների ոլոսը (հայ հեթանոսներ), կրիշնաիստակցություն (վայշնավներ) կազմակերպություններ: Խորհրդում գրանցված է նաեւ Տիեզերք-երկիր գիտական հասարակական կրոնական միության կանոնադրությունը:

Հարկ է նշել, որ օրենքը դարաշրջիր գրանցում չի պահանջում եւ չգրանցված կազմակերպությունների մեջ հայտնի են Ավետարանական մկրտականները, Եհովայի վկաները, Քրիստոսի մարդիկները, մալականների համայնքը, բահայականները: Վերջինս ծնունդ առնելով Պարսկաստանում կրում է նաեւ քրիստոնեության տարբեր: Հայաստանում աղդում են նաեւ մահմեդական քրդեր:

– Հայտնի՞ է արդյոք, թե որքան հետեւորդ ունի յուրաքանչյուր կրոնական կազմակերպությունը:

– Այդ մասին պաշտոնական տվյալներ չկան, քանի որ Հայաստանում նման հետազոտություններ դեռեւս չեն կատարվել: Այդ հարցին չեն պատասխանում նաեւ մարդահամարի տվյալները: Ընդհանրապես համաձայն օրենքի, այն կազմակերպությունը, որի կանոնադրությունը ներկայացվում է գրանցման, պետք է ունենա ամենաքիչը 50, իսկ ազգային փոքրամասնությունների համար 10 անդամ: Ըստ կազմակերպությունների ներկայացրած տվյալների եւ մեր որոշ դիտարկումների արդյունքների, Հայաստանում հիմնականում բնակվում են Աստծո, Արքիկի, Ախուրյանի շրջանների մոտ 12 գյուղերում, 50-100 հազար են: Հոգեգալստականներն ու ավետարանականները միասին ունեն մոտ 40-50 հազ. հետեւորդ: Հայաստանում այսօր աղդում են մոտ 55 հազ. եզդիներ, 30 հազ. ռուսներ, մոտ 400 հրեաներ: Մնացած կրոնական կազմակերպությունների անդամների թիվը տատանվում է մի քանի հարյուրի սահմաններում:

– Որտե՞ղ եւ ինչպե՞ս են կազմակերպում իրենց հավաքները կրոնական կազմակերպությունները:

– Այսքի եւ Բարգի հածար կրոնական կազմակերպության անդամները կարող են հավաքվել ինչպես առանձին եկեղեցական շինություններում, այնպես էլ մասնավոր տներում, բնակարաններում: Այսօր ավանդական Հայաստանյայց Հայ Առաքելական եկեղեցին ունի մոտ 70 գործող եկեղեցի: Միայն 1991 թ. հետո վերաբացվել են ավելի քան 20 եկեղեցի: Մայր Աթոռի տնօրինությանն են վերադարձվել Երեւանի Սուրբ Կարապետը, Կանոյի շրջանում՝ Աշիվանը, Աշտարակի Սուրբ Խաչը (Մողնի), Գառնիի Սուրբ Մարիամը եւ այլն: Արքիկի շրջանի Փանիկ գյուղում աղեն մի քանի տարի է, ինչ գործում է 1846 թ. կառուցված Սուրբ Աստվածածին կարգիկ եկեղեցին: Երեւանում իրենց աղոթատունն ունեն նաեւ յոթերորդ օրվա ադվենտիստները: Ռուս հավատացյալների համար Հայաստանում գործում են 5 եկեղեցի, որոնցից 2-ը վերաբացվել են 1991 թ.-ից հետո:

ԿՐՈՆ

Հայաստանում հայտնի է տարբ 20 կրոնական կազմակերպություն

Նոյյան Տաղան գործակալության թղթակցի հարցերին պատասխանում է ՀՀ կառավարությանն առընթեր Կրոնի գործերի պետական խորհրդի նախագահի տեղակալ Սերգեյ Վարդանյանը:

ՍՈՒՔ ԼԵՅԿ ՍԻՔԻ: Ամեն ինչ կփոխվի ստիպոտի եւ հայրենիքի հայերի համար: Անգամ թղթի պակասությունը Հայաստանում խնդիր չէ: Գրողներն ու պատմիչները ստիպված չեն լինի տարիներով սպասել իրենց գրքերը տպագրելու եւ վերատպագրելու համար: CD-ROM Logistics-ը, Նեռեսս Ինկիլիզյանի կողմից Յուրա նահանգում կազմակերպված ընկերությունը, արտադրում է զակի երկլեզվանի կոմպյուտերային սկավառակ (CD_ROM) «Արարատ» անվանումով:

Այս փոքր լազերային սկավառակը, 120 մմ տրամագծով, պարունակում է 10000-ից ավել էջ կամ 40 գիրք: Դուք հնարավորություն կստանաք կարդալ այդ գրքերը կոմպյուտերի վրա, կամ վերարտադրել թղթի վրա: Այս փոքր սկավառակը պարունակում է Աստվածաշնչի հին եւ նոր կտակարանները, Էմիլ Լեսի, Արիստոֆանեսի, Շեքսպիրի, Սոֆոկլեսի, Դանտեի, Հոմերոսի, Հերոդոտոսի, Պլուտարքոսի, Անրի Վերնոյի, Ֆրանց Վերֆելի նշանավոր գործերը, ինչպես նաեւ հայկական սովետական հանրագիտարանի 13-դ հատորը, որը ամբողջությամբ նվիրված է Հայաստանին:

Իսկ անգլերենով կգտնեք 3800-ից ավելի հնչյունական եւ միջին Արեւելքի ճարտարապետներ, կազմված 15 երկրներից, 50 սարաբաժանումներով:

Օգտագործելով այս առաջադեմ արվեստագիտությունը, Նեռեսս Ինկիլիզյանը հիմնել է արդի հայկական էլեկտրոնային տան գրադարան: Ուրիշ ծրագրեր, որ նախատեսված են արտադրանքի 1994 թ., հետեւյալներն են.

1. Հայկական սովետական հանրագիտարան (13 հատոր) 10000 էջ:

2. Ամերիկայի պետական արխիվներ հայերի կոտորածների վերաբերյալ, 25000 էջ:

3. Հայ ամերիկյան անգլերեն լեզվով 2 բերթերի 10 տարվա ամբողջական հրատարակություններ:

4. Նշանավոր գրքեր, որոնք փոխել են աշխարհը, 10 գիրք:

Պարոն Ինկիլիզյանի համոզմունքն է, որ երկու կամ երեք տարում հնարավոր է Մասենադարանի եւ Հայաստանի պատմության թանգարանի ամբողջական պարունակությունը տեղավորել 6 սկավառակի վրա: Այդ ժամանակ ամեն հայ հնարավորություն կստանա իր տանը հանգիստ այլի անցկացնել հնադարյան բնագրերը կամ էլ ծեռագիր միջնադարյան Աստվածաշունչը, եւ նույնիսկ խոնարհացնել մանրակերտներ ավելի մանրամասն ուսումնասիրելու համար, առա անհրաժեշտության դեպքում էջեր տալ:

Նույն պիտակի տակ կարելի է դնել հայկական կոտորածի վերաբերյալ փաստաթղթեր, որոնք գրված են աբխարհով մեկ, արտաքին նախարարությունների արխիվներում, Վիեննայի, Փարիզի, Բեռլինի, Լոնդոնի, Մոսկվայի, Երեւանի եւ Երուսաղեմի մեջ:

Ավելին, այն հնարավորություն կտա հայկական դպրոցի ծրագրերը ունենալ փոխհանձնարարական հիմքի վրա երկու կամ երեք սկավառակի վրա: Ուսանողները ստիպված չեն լինի ծանր գրքերը տանել դպրոց: Միգուցե, վերանա ուսուցչի օգնության կարիքը: Ուսանողն ու կոմպյուտերը կհաղորդակցվեն եւ ուսանողը կսովորի հանրահաշիվ, պատմություն, լեզուներ եւ այլն, իրեն հարմար չափով եւ արագությամբ:

Սա ծայրահեղ երեւակայության արդյունք չէ, այլ արդի իրականություն: Այս արվեստագիտությունը գոյություն ունի եւ հայկական կազմակերպությունների ու բարեգործների, որոնք ցանկություն ունեն հարստացնել ժողովրդի եւ հայրենիքի ամբողջ հայկական եռամյանի մշակույթը՝ ուղարկելով նրան մեզ:

Երկրաշարժից բալանված հայաստանը չեն փրկի կառագը, դոլլարը կամ գենը: Հայաստանը կփրկվի մշակույթի եւ ամեն մի հայի առողջ ստեղծագործական մտքի զարգացումով:

Ավելի տեղեկություններն համար դիմել CD-ROM Logistics; P. O. Box 867; West Tocdan, UTAH 84088, Fax (801) 255-6262 ■

ՏԱԿԻՐԴ

Պաշտոնյաների եկամուտները կարձանագրվեն

Երեկ Գերագույն խորհուրդը 130 կողմով ընդունեց մի որոշում, ըստ որի Ֆինանսավարկային եւ բյուջետային հանձնաժողովին հանձնարարվում է որոշակի ժամկետում ներկայացնել օրենքի նախագիծ, որով նախատեսվում է, որ հանրապետության բարձրաստիճան պաշտոնյաները եւ դրանց հավակնորդները հայտարարագրեր կլրացնեն իրենց եկամուտների եւ գույքի վերաբերյալ: Մնում է ավելացնել միայն, որ եթե նման որոշում ընդունվեր ավելի վաղ, այսօր՝ համաշարաթ բացահայտումների ժամանակ ոչ ոք չէր կարող հայտարարել, թե «այսինչը միշտ էլ փող է ունեցել»:

Վառելիք ներկրող մեքենաները սահմանը կհատեն առանց վիզայի

Հայաստանի կառավարությունը որոշել է մաքուր եւ դիզելային վառելիք ներկրող ավտոմեքենաներին թույլատրել Մեղրու շրջանի «Կարճեւան» սահմանային անցակետով անցնել առանց հատուկ վիզայի՝ վարորդների անձը հաստատող փաստաթղթերով: Կառավարության նոր կարգադրությունը կգործի մինչեւ Մեղրու սահմանային անցակետի կարգավիճակի մասին համապատասխան օրենսդրական ակտի ու սահմանային անցման հարցերի վերաբերյալ Իրանի հետ միջպետական համաձայնագրի ընդունումը:

«Կարճեւան» սահմանային անցակետով մուտք գործելու իրավունք կտրվի միայն Հայաստանի կառավարության կողմից լիազորված կազմակերպությունների եւ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից կնքված պայմանագրերի հիման վրա մաքուր եւ դիզելային վառելիք ներկրող մեքենաներին:

Հսկան կաուչուկ չի տալիս

ԵՐԵՎԱՆ, 16 ՓԵՏՐՎԱՐ, ՍԱՐԳԻՍ: Այս տարի ոչ մի տոննա կաուչուկ չի տվել Հայաստանի խոշորագույն ծեռնարկությունը՝ «Նայիրիտ» արտադրական միավորումը: Ինչպես խորհրդարանի նիստում հայտնեց արդյունաբերության նախարար Ա. Սաֆարյանը, ներկայումս այդ արտադրանքն հիմնական բողարկում է միայն հարակից արտադրանք կաուստիկ սոդա եւ հեղուկ քլոր: Այդ իրավիճակը կապված է Հայաստանի տնտեսական մշտական շրջափակման եւ էլեկտրաէներգիայի պակասի հետ: 1991 թ., երբ խորհրդարանի որոշմամբ վերսկսվեց «Նայիրիտ» գործունեությունը, որն ավելի վաղ փակվել էր բնապահպանական պահանջներով, Հայաստանի ղեկավարությունը պնդում էր, թե ձեռնարկության շահագործումը կտա տարեկան առնվազն 100 միլիոն ամերիկյան դոլլարի շահույթ: ■

ԵՐԵՎԱՆ

Էներգախնայողության գիտաժողով

ԱՏԵՓԱՆ ՊԱՊՈՒԾՅԱՆ

Հանրապետությունում աշխատանքներ են տարվում էներգախնայողության հեղանկարային խնդրի հետ կապված: Այս խնդրին էր նվիրված փետրվարի 15-ին Հայաստանի Ամերիկյան համալսարանում գիտաժողովը՝ կազմակերպված «Հայաստանի էներգախնայողության ստրատեգիա» ծրագրով աշխատող ֆրանսիական «BCEOM» ֆիրման: Սեմինարի նպատակն էր մեր հանրապետության մասնագետներին ծանոթացնել «BCEOM» ֆիրմայի կողմից կատարված աշխատանքների արդյունքներին ներկայացնել ուսումնասիրված հնարավոր տնտեսական զարգացման տարբեր սցենարներ եւ նրանց ազդեցությունն էներգետիկայի վրա, ներկայացնել գնագոյացման հեռանկարային մոտեցումները: Ներկայացվեցին եւ լայն ձեւով քննարկվեցին էներգախնայողության իրականացման երկու հիմնական սցենարներ, որոնց ամենակիրիս վերլուծությունը հնարավորություն կտա որոշելու այդ սցենարների իրագործման, էներգետիկական եւ տնտեսական գնահատման դժվարությունները: Ուսումնասիրությունները կատարված են էներգետիկական շրջափակումների բացակայության դայմանների հիման, հետեւաբար նրանք ունեն հեռանկարային բնույթ: Ֆրանսիական «BCEOM» ֆիրմայի կողմից կատարված աշխատանքներին մասնակցել են նաեւ մեր մասնագետներ:

Որպես մասնագետի, իմ սեփական դիրքորոշումն այն է, որ այս աշխատանքը կարող է կազմել օրգանական շարունակություն այն գիտական ուսումնասիրությունների, որոնք կատարվել եւ կատարվում են մեր հանրապետության մասնագետների ուժերով: ■

ՈՒՍԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության 9 տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի խմբագիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Հեռ. 562941, տելեքս 243266 CPSU SU
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՀԱՍԼԵՏ ԳԱՍՊԱՐԵԱՆ / 581841
Տնօրեն
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ / 562863
Ոճը եւ տարածքները ՊԱՌԵՆ ՊԱՆԱՔԵԱՆԻ
Apple Macintosh համակարգչային ծառայությունը «Ազգ» թերթի
Azg
armenian daily
LIBERAL DEMOCRATIC NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010
Published in U.S.A. by AZG Publishing Co., 22122 Sherman Way, Suite 203, Canoga Park, CA 91303, Call (818) 598-0423 Fax (818)340-9819 for subscription rates.
Publisher - Հրատարակիչ
Dr. Krikor Krikorian -
Դոկտ. Գրիգոր Գրիգորեան
Executive Director - Տնօրէն
Vartan Karaoghlanian -
Վարդան Գարաւողլանեան
Production Manager -
Raffi Shoybookian
Արտադրութիւն
Ռաֆֆի Շուղբուքեան
«Ազգ» օրաթերթը հայտնվում է ԱՄՆ «ԱՐՄԵՆԻԱ» ՕՊԸ-ի հանձարգային կարով
Հեռաձայն: 7-8852 281425,
Ֆաքս 7-8852 285082
E-MAIL INTERNET: ROOT YEREVAN @ REX. IASNET. COM

ՆՈՐՈՒՅԹ

Հայկական 40 գրքեր էլեկտրոնային փոքր սկավառակի վրա

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՇՐՋԱՆ, ԱՊՀ

ԱԴՐԲԵՋԱՆ

Ալիեւի օրերը Ճգնաժամային եղան Անկարայում

Ակնկալվածից բոլորովին տարբեր փուլերով անցան Ադրբեջանի Հանրապետության նախագահ Հեյդար Ալիեւի օրերն Անկարայում, եւ թուրքական հանրային կարծիքը շարունակում է երկդիմի կեցվածք ցահել եղբայր ժողովրդի նախագահի հանդեպ: Այն մասին տեղեկանում ենք Սեամբուլում հրատարակվող հայերեն «Ժամանակ» թերթից:

Թերթը գրում է, թե Ալիեւն Անկարայում ժամանեց 160 հոգեւանոց խմբով, որ տեղ էին գրավել փորձագետներ, արվեստագետներ, գիտնականներ, մտավորականներ եւ հեռուստատեսության բդրաստիներ: Անկարան, որ արդեն իսկ անցյալից որոշ վերապահություններ ուներ Ալիեւի հանդեպ, թեեւ չթերացավ իր ավանդական հյուրամեծարության մեջ, սակայն չմոռացավ նաեւ օգտվել ներկայացված ասիթից, քանդով հասկացնել մի շարք լուրջ պարագաներ ու կարեւոր կետեր, որոնք ոչ միայն խանգարում են երկու եղբայրների եւ ժողովուրդների բարեկամությանը, այլեւ լրջորեն սպառնում Թուրքիայի անվտանգությանն ու շահերին:

Ինչպես անդրադարձել էինք երեկ, տեղական մամուլից հաղված կամ հիերցումով եւ խոսելով Ալիեւի հասկացելի բարեկամության մասին, արձագանքել էինք այն դիտումներին, թե Ադրբեջանի նախագահը գաղտնի հանդիպումներ է ունեցել ԲԿԿ կազմակերպության եւ նրանց հետ դարբերաբար որոշ գործակցություններ էլ ունի, որն այսօր ավելի է ամրապնդվում «Թերջումանի» հրատարակումներով, որոնք անհավատալիորեն ծանրակշիռ են, եւ Ալիեւը դժվար թե կարողանա ինքն իրեն փրկել այդ ամբաստանություններից:

Երեկ Անկարայում, երբ Ալիեւը իր ասուլիսներ անախորժ անակնկալ էին վերապահել նրա հանդեպ, խնդիր որ հանկարծ սկսեցին բողոքի ձայներ հայտնություններ անել ծեռերին ցցփահարելով նախկին նախագահի ի բուլիզ էլչիբեյի նկարները, ուր է բրականում Թուրքիայի իսկական բարեկամն էր եւ դաբրոնված էր «ազգընտիր» նախագահ Բայդ կկատելով, որ Ալիեւը դաբերաբար թուր էր ի վերջո, ցուցարարները արգելվեցին եւ հսկողության տակ առնվեցին:

Նախագահ Գեմիրելը նրա արարողակարգային հյուրասիրությունից դուրս, ընդհանուր առմամբ բավարարվեց ամբաստանություններ ուղղելով իր հյուրին եւ բացատրություն պահանջեց, որոնց սակայն Ալիեւը դժվարացավ գոհացուցիչ պատասխան տալ: «Թերջումանն» իր այսօրվա համարով ուղղակի ամբաստանում է Ադրբեջանի Հանրապետության նախագահին, պնդելով, որ նա իրականում Թուրքիայի նախագահ Դաֆեզ Սաադիի վերի վտանգավոր է Թուրքիայի համար, որովհետեւ լայն չափով օգնակում է ԲԿԿ-ին, ամեն տեսակ դաբելերություն ցույց տալով այդ կազմակերպությանը: Թերթը գրում է, թե Հեյդար Ալիեւը շարունակում է վտանգավոր կերպով խաղալ երկկողմանի մի խաղ Ռուսաստանի եւ Թուրքիայի միջեւ, ուր սակայն դժվար կլինի բաղցնել իր հանցավոր գործակցությունը նաեւ ԲԿԿ-ի հետ: Անշուշտ, չի կարելի ասել, թե կատարելապես ապացույց եւ տարակարծություններով լի անցան հանդիպումները, սակայն մյուս կողմից ուշագրավ էին խորհրդանշական եւ արբնամիտ Հեյդար Ալիեւի խուսափողական բացատրությունները եւ անորոշ արտահայտությունները, որոնք սակայն չվերացրին փորձառու Սեմիրելի ուշադրությունից: Ամեն պարագայի հնարավոր եղավ մեծ թվով համաձայնագրեր ստորագրել երկու երկրների միջեւ: Այստեղ Թուրքիան միշտ պիտի շարունակի իր վերապահությունը Ալիեւի հանդեպ եւ անընդհատ պիտի հետաքրքրի ժողովրդավարության վերահաստատման աշխատանքները Ադրբեջանում, եթե կացնում է թերթը:

ՎՐԱՍՏԱՆ

Աբխազիայի խնդրի կարգավորման շուրջ

Փետրվարի 15-ին Աբխազիայի պատգամավորության փոխնախագահ գեներալ-մայոր Մեհրաբ Կիշմարիան հայտարարեց, որ Աբխազիայի գլխավոր ուժերի խնդիրը կատարված է եւ Գալիի շրջանում վրացական զինվորական խմբերը ոչնչացված են: Ըստ Նալչիկի Տաղանի հաղորդման, հանձնարարությունն ամփոփել էր 10-օրյա գործողության արդյունքները: Գրան մասնակցել են 2000 մարդ, 10 միավոր զրահատեխնիկա, ինչպես նաեւ օդուժ եւ ռազմածովային ուժեր: Գործողությունն անցկացվել է Աբխազիայի պատգամավորության եւ ներքին գործոց նախարարությունների համատեղ ուժերով: Ջանքագործվել է նյութական 10 խմբավորում: Գործողության ընթացքում պայթեցումներ են կանխվել Խեցուրի եւ Կոդորի գետերի շրջանում: Աբխազական կողմից զոհվել է 78 եւ վիրավորվել 19 մարդ: Հակառակորդի կորուստները մեծվում են: Ռազմագերիների թիվը կազմում է մոտ 80 մարդ:

«Վրաստանի եւ Աբխազիայի սահմանամերձ շրջանում մարտական գործողությունների հետեւանքով շրջափակվել են վրացական խմբերի մնացորդները: Նրանց առաջարկվել է հանձնվել կյանքի պահպանման երաշխիքով:

Միաժամանակ, երկուշաբթի օր հայտնվող ավանդական ռադիոհաղորդումի ժամանակ Էդուարդ Շեւարդնաձեն դարձյալ անդրադարձել է վրաբազական հարցին, նշելով, որ «մենք ճիշտ էինք, երբ ասում էինք աբխազական հանդիսությունը հանձնարարելու խնդիրը: Հակառակ դեպքում տեղի է ունենալու վտանգը, երբ հանդիսությունն անբնականորեն բնույթ կստանա եւ դառնալու մեծ տարածության վրա, ինչ որում, դա տեղի կունենա տարբերությամբ:

Էդուարդ Շեւարդնաձեն մեկ անգամ ես դատապարտել է Ռուսաստանի դիմադրությունն աբխազական հանդիսության նկատմամբ վարվելաձեւերին հայտնելով, որ այդ երկիրը տրամաբանորեն է ստանձնել խաղաղարար գործունեությունները եւ մոգեցել իր զորքերը, քանի որ Աբխազիայի կարգավորումը թե Ռուսաստանի, թե Վրաստանի շահագրգռության առարկան է:

Դեռեւս 1993 թ. նոյեմբերի վերջին Թբիլիսիում տեղի ունեցավ կառավարական նոր կոնակցության «Վրաստանի հաղորդակցիների միության» հիմնադիր ժողով: Կուսակցության մեջ մտել են «Կանանչների շարժումը», «Թբիլիսիի հաղորդակցիների միությունը», «Միասնություն եւ բարգավաճում» կազմակերպությունը եւ մի քանի այլ շրջանային խմբեր, որոնք ներառում են ստեղծագործող եւ գիտատեխնիկական մասնագետների ներկայացուցիչներին, այդ թվում Զուրաբ Ժվանիային, Էդիսար Շեւարդնաձեին, Լանա Ղոգոբերիձեին, Ռեւազ Ամաշուկելին, Վախտանգ Կիկոբիձեին եւ այլոց: Աբխազիայի Գալիի շրջանում կատարված վերջին դեպքերի կապակցությամբ այդ կուսակցությունը հանդես եկավ հայտարարությամբ:

Այս տարվա փետրվարի 7-ին այ-

ցիկ ապրված հրան սառնիկ գրեթե ոչ ոքի դիմադրություն չարեցին: Ամբողջ հրան սառնիկ գրեթե ոչ ոքի դիմադրություն չարեցին: Այդ մարդկանց կյանքը ներկայումս վտանգի տակ է:

«Վրաստանի հաղորդակցիների միությունը» հայտարարում է, որ Աբխազական վերջին հերթական բարդացումը այդ հերթական բարդացումը հայտնի դարձած է ՄԱԿ-ի խաղաղ ճնշում անցկացվող հաստատության լուսանկարչությունների դեմ: Ցեղասպանության այդ փաստը տեղի ունեցավ Ժենեւի բանակցությունների շնորհիվ ձեռք բերված համաձայնագրի եւ Ռուսաստանի նախագահի Վրաստան կատարած այցից հետո: Երբ խոսքնում ուղղվեցին հակամարտության խաղաղական կարգավորման ուղիներ, եւ մի քանի օր անց պետք է սկսվեր հարյուր-հազարավոր գաղթականների վերադարձման գործընթացը:

«Վրաստանի հաղորդակցիների միությունը» ՄԱԿ-ին, համաշխարհային հանրությանը, եվրոխորհրդակցության մասնակից պետություններին եւ Ռուսաստանի նախագահին կոչ է անում անհապաղ կերպով համապատասխան արձագանք դրսեւորել այդ փաստի առթիվ:

Պ. Գրաչով. Ռուսաստանը պետք է պարծենա ինտերնացիոնալիստ մարտիկներով

ՍՈՉԻ, 15 ՓԵՏՐՎԱՐ, ՌԻԱ ՆՈՎՈՍՏԻ: «Այսօր մեր հասարակության մեջ ինչպես էլ որ որոշվեն աֆղանական պատերազմը, մի բան պարզ է. ինտերնացիոնալիստ մարտիկներն այնտեղ եղել են մեծամասամբ իսկական արիության, հերոսության, մարդկային լավագույն հատկություններ, զինվորական երդման եւ հայրենիքի նկատմամբ հավատարմության հանդեպ բերած զինվորներ», հայտարարել է Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարար, բանակի գեներալ Պավել Գրաչովը:

Ելույթ ունենալով Ռուսաստանի Բանակի կենտրոնական տանը Աֆղանստանից խորհրդային զորքերի դուրսբերման 5-րդ տարեդարձին նվիրված հանդիսավոր ժողովում նախարարը նաեւ նշել է, որ 545 հազար ինտերնացիոնալիստ մարտիկներ լիակատար իրավունք ունեն ասելու, որ իրենք ազնվորեն կատարել են իրենց զինվորական պարտքը: «Մեր մեղքը չէ, աֆղանական պատերազմի բոլոր վետերանների անունից ասել է Պավել Գրաչովը, որ քաղաքական ղեկավարների տխրելների համար բանակը պետք է հատուցեր սեփական արյամբ: Մեր 13.833 ընկերներ չվերադարձան աֆղանական պատերազմից»: ■

ՀԱԿԻՐԲ

Իսրայելն աջակցություն է ցույց տալիս Էստոնիային

ԹԵԼ ԱՎԻՎ, 11 ՓԵՏՐՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: 1993 թ. սկզբին Էստոնիան Իսրայելի հետ կնքել է մի պայմանագիր, որի համաձայն Էստոնիայի բանակը ստանում է 60 միլիոն դոլլարի իսրայելական սպառազինություն: Վերջերս Իսրայելն անհատույց Էստոնիային է տվել ռազմավարային սպառազինություն, այդ թվում վերջին արաբ-իսրայելական հակամարտության ժամանակ նվաճած խորհրդային արտադրության գնդացիներ եւ արագաձիգ զենիթային բնդանոթներ:

Զենքը նախատեսված է Էստոնական բանակի եւ «Կայսելիյս» ռազմականացված կազմակերպության սպառազինման համար: Այս նվերը գնահատվում է 20 միլիոն էստոնական կրոն:

ՆԱՏՕ-ի սանդարշներին համաձայնասխանող հրաձգային զենքը (5,56 եւ 7,62 տրամաչափերի) նախատեսված է Էստոնական կանոնավոր բանակի համար: Իսրայելի նվիրած 7,62 տրամաչափի ՈԿԴ գնդացիները պետք է տեղակայվեն զրահամեքենաների վրա: 23 միլիմետրանոց զենիթային բնդանոթները նախատեսված են բանակի հակաօդային պաշտպանությունն ուժեղացնելու համար:

Ստեղծվում է ամերիկա-ադրբեջանական ձեռնարկություն

ԲԱՔՈՒ, 15 ՓԵՏՐՎԱՐ, ԹՈՒՐՔՍՆԱՐՔ: Ամերիկյան «Դրեսեր սեյուրիթի» ֆիրման ընդունել է «Ազնեբեխիմմաշ» պետական կոնցեռնի առաջարկությունը Բաքվի էլեկտրաքիմական գործարաններից մեկի հիման վրա ստեղծելու նավթահորերի ստվարման եռագունդ հորատիչի արտադրության համատեղ ձեռնարկություն:

Ադրբեջանում այդ դեռեւի արտադրությունն ընդհատվել էր 20 տարի առաջ նավթամեքենաշինական միութենական նախարարության որոշմամբ: Այն ժամանակվանից եռագունդ հորատիչն արտադրվում էր Կույբիշեւում: ԽՍՀՄ փլուզումից հետո այդ դեռեւի առաքումն Ադրբեջանին դադարեցվեց:

Ներկայումս «Դրեսեր սեյուրիթիի» ներկայացուցիչները մշակում են նախագծի տեխնիկական մասը: Մասնագետների կարծիքով, համատեղ ձեռնարկության արտադրանքով կարելի է ոչ միայն բավարարել Ադրբեջանի կարիքները, այլեւ այն արտահանել մերձավոր արտասահմանի երկրներ:

Հարձակում շաբի վրա

ԴՈՒՇԱՆԲԵ, 15 ՓԵՏՐՎԱՐ, ՌԻԱ ՆՈՎՈՍՏԻ: Ինչպես հավատի աղբյուրներից հայտնի է դարձել ՌԻԱ գործակալությանը, փետրվարի 14-ի երեկոյան Տաջիկստանի Բոխտարի շրջանում անհայտ անձանց մի խումբ հարձակում է գործել Տաջիկստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հատուկ նշանակության բրիգադի շաբի վրա: Շահատաված զվալներով, սպանվել է բրիգադի շաբի պետը: Հարձակվողներից սպանվել է երեք մարդ:

Իրանա-վրացական տեղեկատվական կենտրոն

ԹԲԻԼԻՍԻ, 15 ՓԵՏՐՎԱՐԻ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Վրաստանի արտաքին գործերի նախարար Ալեքսանդր Չիկվաիձեն եւ նրան ուղեկցող պատգամավոր անձինք Իրանի Իսլամական Հանրապետության արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավար Ալի Ամբար Վելայեթիի հրավերով մեկնել են Իրան:

Այցի ընթացքում Վրաստանի ներկայացուցիչները հանդիպումներ կունենան Իրանի ղեկավարության հետ, որի ժամանակ կքննարկվեն երկու երկրների երկկողմ համագործակցության զարգացման հեռանկարները, հատկապես էկոնոմիկայի բնագավառում: Կորոշվեն արդյունաբերական տարբեր ճյուղերում համագործակցելու տեսանկյունները, ինչպես նաեւ կքննարկվի Թբիլիսիում եւ Թեհրանում համատեղ տեղեկատվական կենտրոն բացելու նախագիծը: ■

ԲԱՔՈՒ

Վրաստանի արտգործնախարարն Ադրբեջանում

ԲԱՔՈՒ, 15 ՓԵՏՐՎԱՐ, ԹՈՒՐՔՍՆԱՐՔ: Վրաստանի արտգործնախարար Ալեքսանդր Չիկվաիձեն եւ նրան ուղեկցող անձինք երեկ երեկոյան ժամանեցին Բաքու: Փետրվարի 15-ին Չիկվաիձեն հանդիպումներ ունեցավ Ադրբեջանի արտգործնախարար Հասան Հասանովի եւ նախագահ Հեյդար Ալիեւի հետ: Ալիեւը պատմեց Թուրքիա կատարած իր այցի արդյունքների մասին: Չիկվաիձեն ասաց, որ Վրաստանի տնտեսական դժվարությունները էլ ավելի են խորացրել երկրի հասարակական-քաղաքական իրավիճակը: Նա Ալիեւին հանձնեց Շեւարդնաձեի հրավերը պատգամավորական այց կատարել Վրաստան: Ալիեւը շնորհակալությամբ ընդունեց հրավերը:

Ադրբեջանի նախագահի մամլո ծառայության հաղորդման համաձայն, 1993 թ. Ադրբեջանից Վրաստան է արտահանվել 29,9 մլն. ներմուծվել 17,2 մլն դոլլարի ապրանք:

Նույն օրվա երեկոյան Չիկվաիձեն պետք է ժամաներ Թեհրան, որտեղ, ըստ վրացական աղբյուրների, քննարկվելու են Ադրբեջանի տարածքով Վրաստանին իրանական գազի մատակարարման հարցերը:

ՄՈՍԿՎԱ

Միջակ խավի կուսակցությո՞ւն

ՄՈՍԿՎԱ, 16 ՓԵՏՐՎԱՐ, ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ԱՐՄԵՆՊՐԵՍ: Փետրվարի 15-ին ծնունդ առավ Ռուսաստանի նոր մեկ կուսակցություն այսպես կոչված մեծամասնության կուսակցությունը, որի հիմնադիր համագումարն անցկացվում է Մոսկվայում: Օրակարգում են ծրագրային փաստաթղթերի ընդունումը եւ կուսակցության ղեկավարության ընտրությունը:

Ներածական զեկուցման մեջ Մեծամասնության կուսակցության կազմկոմիտեի նախագահ ձեռնարկատեր Վյաչեսլավ Գրեչնեւը հայտնեց, որ նախաձեռնող խումբը մտադրություն է ստեղծել այնպիսի կուսակցություն, որը կկարողանար արտահայտել բնակչության մեծամասնության, այսինքն միջակ խավի շահերը: Զեկուցողը նշեց, որ Ռուսաստանում միջակ խավը փաստորեն դեռ չի կազմավորվել: Դրա հետեւանքով Ռուսաստանը, նրա խոսքերով, վերածվել է «ընտրախավի եւ լումպենների երկրի»:

Կուսակցությունը, շարունակեց նա, գաղափարախոսությունից դուրս է: Նրա միակ գաղափարախոսությունն ընտանիքի բարեկեցությունն է եւ օրինականությունը: «Մենք կարող ենք մի կտոր հաց տալ յուրաքանչյուր սովյալի, սակայն Մեծամասնության կուսակցությունը բարեգործական կազմակերպություն չէ», հայտարարեց Վյաչեսլավ Գրեչնեւը: ■

digitised by A.R.A.R.@

հրատարակ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

«Բժիշկներն օդից» ... մոլորվեցին ցամաքում

ՄԱՐԳԱՐԻՏ ՂԱՐԻԿԱՅԱՆ

«Կեսօրին, երբ երկուսը մտել էին տնակ, ընտանիքի անդամներին ցուցակագրելու, միևնույն անձ, որոնցից երկուսը անչափահաս, երկուսը հաշմանդամ, բոլորը դուռկած էին եղել անկողիններում, դեմքերը դեղի դաստ: Նրանք հարցերին չէին դասախանել, ոչ էլ շրջվել էին եկողների կողմը»:

Այս դասկերը մոռանալ կլինի՞, եթե նույնիսկ աչքովդ չես տեսել, այլ լսել ես մեկից, որը եկել է ինչ մոտ, ընդամենը սիրտը թեթևացնելու: Սարսափելին այն էր, որ զրուցակիցս, գյումրեցի մի կին, չէր դնդում գրեթե, դայքարեթ անտարբերության ու անարդարության դեմ: Նա չէր բղավում բանդեթ դասնեբը: Նա այն աստիճան ընկճված էր, որ չէր հավատում, թե ինչ-որ բան հնարավոր է փոխել: Նրա ուզածը խոսելն էր, եւ խոսում ու խոսում էր բաս մեղմ ու ցածր ձայնով: Գոնե բառերո՞վ կարողանար ազատվել իր եւ հասարակությունների անդաշտանվածությունից: Հետո, երբ անցավ մի ամբողջ ամիս եւ ես էլ (թեև, որ չէր անցել առանց վերադրելու լսածս) ոչինչ չձեռնարկեցի, նոր հասկացա, որ առավել սարսափելին ոչ թե կնոջ հուսահատությունն է, այլ իմ չնչահավատությունը: Գրե՞լ, ինչի համար, ո՞ւմ ուղղել խոսքը: Չէ՞ որ, լրագրության իմ երկար կյանքում, բազմաթիվ հրադարակումներից յուրաքանչյուրից հետո, հոգուս խորքում վստահ եմ եղել, որ ինձ արձագանքելու են, որ խնդիրը մի փոքր, մի աննշան չափով, տեղաշարժվելու է, փափկելու է լարված մի նյարդ, բեկվելու է վերաբերմունքը դեղի արդարը, դեղի գործնական ու արդյունավետ լուծումը:

Սակայն, իզուր չի ասված, աշխարհը չոփով ծածկած չէ, եւ ոչ էլ մոտ է վախճանը: Ժամանակն անցնելու է, կյանքը, լավ թե վատ, շարունակվելու է եւ գեղեցիկ օրերի հույսը երբեմ չի մարելու: Ուրեմն պարտքս մնում է պարտք, գյումրեցի կնոջ դասածը, որն, իհարկե, նորություն չէ, մեկ անգամ ես հանձնել հանրության ուշադրությանը:

Ես զարմանում եմ, որ երեւանցիներ բողոքում են, ասում էր նա, որ Գյումրիում ադրեին, ի՞նչ կանեին: Երեկ, Երեւան գալիս ուղեւորներից մեկը բաս դիտդիկ բնորոշեց մեր վիճակը՝ ոնց որ դեմդ բարձր դաս բաշեն, բռնելու տեղ չունենաս, բայց ասիդված ես բարձրանալ: Այդ դաստը նրա ասելով, բարձրանում է ամեն բայլափոխի լվացվելիս, ճաշ եփելիս, երեխային լողացնելիս (հազվադեմ մի երեւույթ): Տենց որ ուզում եմ դուրս գալ, բոնակից վախենում ես, ձեռդ կդրում է երկաթին...

(Աչքս դաստիանին զցեցի: Մի դաստանի, ջութակը բեսի տակ, մայթով գնում էր: Մինչդեռ փողոցի սառույցը հալված, մասերով այս որքա՞ն ծերեր, նավթամաններ ձեռքերին):

Երբ մտնես Գյումրիի քաղաքային ադարան կամ ԲՀՏ, ոչ թե դաս, այլ դիմացդ ամրոցի դարիալ կբարձրանա: Այնտեղ բեզ կասեն. 69 տարեկան ես, բեզ օգնություն չի հասնում, իսկ 72 տարեկանին կտեղեկացնեն ուշացել ես, վերջացել է: Երեւանում Գերագույն խորհուրդ կա, այն կա, այն կա, կարող եմ բողոքել: Գյումրիում ո՞ւմ բողոքես: Օգնությունը գալիս է հսկողություն չկա, միանգամից տալիս են գայլերի բերան:

Գյումրեցի կինն ինձ հարցրեց. «Բժիշկներ օդից», լսե՞լ եմ, զվեյգարական կազմակերպություն է: Սոմալիից ուղիղ եկել են Հայաստան, մեսաջիր են ասելի օրերն ինչ ոնց որ դեմ ես չէի լսել, նա մանրամասնորեն ինձ հաղորդեց: 1993 թ. դեկտեմբերի կեսերն էր: Նդուսակը օգնել կարիքավորներին: Տեսնելով, որ Գյումրիում մարդիկ ամենաբաստ ցրից են տառապում, քաղաքաբնակին առաջարկել են աջակցել, որոնցի որքան հնարավոր է շատ, իրենց միջոցներով վառելիք ձեռք բերվի եւ բաժանվի տնակներում ապրողներին: Ուղեվարկոցն իջնում է, հնարավոր չէ շրջափակում, վառելիք բերելու ճանապարհ ոչ ծովով, ոչ էլ ցամաքով» ավտոմեքենա են գնել, չեն կարողանում համարանիշ ձեռք բերել, որոնցի քաղաքում կարողանան ազատ շարժվել: Տեղեկանք են ուզում: Մարդիկ մնացել են զարմացած: Ի՞նչ տեղեկանք, ումի՞ց: Ավտոմեքենան կա, վարել գիտեմ, ցորդակցներս բարի է... Չէ, չի լինի: Տվել մեզ տեղեկանք...

Եվ օդից իջել, մոլորվել են ցամաքում: Սփոփված ձեռնարկել են այն մարդկանց ցուցակներ դասելուն, ովքեր բնակվում են տնակներում: Վարձել են 20 հոգու, իրենք էլ հեսներ: Թաղամասերը բաժանել են իրար մեջ: Այցելում են երկու-երկու: Յուրաքանչյուր զույգը 30-50 տնակ հազիվ է հասցնում: Իսկ տնակներն, է՛, մի փոքր «գոստրկ» չէ, 1926 թ. երկրաշարժից հետո շինված «բարաքներ» չեն, այլ մի ամբողջ քաղաք: Դառնանք ու ետ գնանք քաղաքամեջտեղ, այդտեղը ոչ մի տեղ գրանցված չե՞ն, աղեղից հետո աշխարհի ուշադրության կենտրոնում գտնված քաղաքում չկա՞ մի կազմակերպություն, որ երբեք հաշվառում առած լինի: Չկա՞ վիճակագրություն: Թե՞ վերանվանվել է վիճակահանության վարչություն:

«Բժիշկներն օդից» հաշվառումն սկսել էին դեկտեմբերի կեսից, մտադիր էին նվերներ բաժանել Ջրհոտսի ծննդյան տոներին, բայց, հեսը գործ չէր: Եվ, սփոփված, կրկնում էին. «Սոմալիում օգնելն ավելի հեսը էր, այստեղ ամեն քայլափոխի արգելքներ են հարուցվում»:

Պաս, բարձր, աննահանջ, ոչ միայն տեղացիներն, այլեւ հեռվից եկածներ բազմաթիվ այցեր: Այստեղ էլ, հասկանալով ԱՄՆ-ի դեսպանի զարմիկների հետագա այցերի կարեւորությունը Հայաստանի համար, ԱՀՀ-ն ջանքեր է գործադրելու այսօրվանից այցեր կազմակերպելու:

ԱՀՀ-ն աշխատանքներ է տանում Միջազգային արժութային ֆոնդից եւ Համաշխարհային բանկից նոր վարկ ստանալու ուղղությամբ: Այդ վարկն անհրաժեշտ է հայկական դրամի կայունացման համար: Կարող եմ ասել նաեւ «Արմոյի» գործունեության մասին, թեեւ այն ուղղակիորեն կապված չէ ԱՀՀ-ի հետ, եւ շահագրգռված եմ նրա աշխատանքներով: Եթե ստացվի ՀՀ կառավարության աջակցությունը, արդեն այս տարի արդեն կսկսվեն աշխատանքներ գազի եւ նավթի փորձնական հորատանցքերի փորման ու սեյսմիկ հետազոտությունների գծով:

– Այս տարի ի՞նչ աշխատանքներ է իրականացնելու ՀՀՀ-ն:

– ՀՀՀ-ի հիմնական խնդիրը սփոփումն ՀՀՀ-ի մասնաճյուղերի աշխատանքի կազմակերպումն է: Նախատեսվում են նաեւ շինարարական աշխատանքներ: Կառուցվելու են դպրոցներ, մանկապարտեզներ, մշակույթի օջախներ եւ հիվանդանոցներ: Ցավոք, մենք չենք կարող իրականացնել ճանապարհաշինարարություն, հիմնարկ-ձեռնարկությունների վերանորոգում, մի խոսքով՝ այնպիսի աշխատանքներ, որոնք բնակչությունը հույս չունեն:

Բոլորն անկողիններում, դեմքերը դեղի դաստ, անտարբեր շրջապատի հանդեպ: Մյուսում, մանուկը փաթաթված կամ աղյուսի կտոր քաշքշված է ծոցերի մեջ, խորքում վառարանը (դեմին նայես սեւ մարդիկ դրսից հարց է տվել), երրորդում ապակի տուր հատվածները նույնն են մի «բռնանկա» հագնած բանդագույն դեղքում մի գլուխ ցնդել էլ կա: Տնակներ կան, որտեղ ջեռուցիչները օրվա որոշ ժամերի ընթացքում ցածր է 2-3 աստիճան: Մեծ մասամբ դիմանկարում են անտարբեր: Հանգիստ բաշում են ինչքան դեռ կարող եմ, օգնեմ: Դրանց մեջ դեռ ոգի կա, իմքնասարեցնության բնակչի չի մարել:

Տեղեկանք, տեղեկանք բերեմ, ցուցակներ չկան: Հաշվառում չկա:

«Տղա անգլերեն գիտի, ընդգրկված է այդ խմբում: Երեկոյան գալիս է նստած, աշխատանքի: Հասկանում գիտեմ, որ հիվանդանալու է», եզրակացնում է զրուցակիցս:

Հետո լուռ լսում եմ: Ներսս մի բան է կտրվել: Ինչ-ինչ ոգեւ Գյուրջանովի կարմիր ու սպի գնի բերում գույց է տալիս, թե որտեղ է կտրվել լարը: Մի անգամ քանի, որ գյումրեցիների հրեսին էին բերյուղ: «Դոմ չե՞ք ընտրել ձեր ոնկիստանները», մոռանալով, որ իրենք իրենց առաջ հողերն ավելի բաս են, քան խոսքերը:

Սփոփված ուզում եմ բղավել ճանփայ տվեք նվիրյալներին:

Պատերազմող երկրի ոչ միայն ազգանվանակատում, այլեւ բիկումում էլ նվիրյալներ են ոլորտ: Այդպես հարբանակ բաս չի գա: Այդպես կնուսներ տասնապատիկ կլինեն:

Գյումրեցի կինը, որ խոսացավ նոցից գալ, չեկավ: Իսկ ես, վերջին անգամ, երբ մեր ոաղիոն աշխատում էր, լսեցի, որ Լյովա Աղամյանին անվտանգություն են հայտնել: Բայց թե նոր ընտրություններն ավարտվե՞լ են, եւ երկ այդ, արդյո՞ք անհամեմատելի եւ հոգս հաշող մեկն է ասացել: Ձայների ոնձամասնությունը, լսոր չունեմ:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

Հրայր Հովնանյան. «Հայաստանին փայլուն ապագա է սպասում»

Նոյան Տարոնի գործակալության թղթակից Արման Հարությունյանի հարցերին պատասխանում է Ամերիկայի Հայկական համագումարի (ԱՀՀ) նախագահ, «Հայաստան» համահայկական հիմնադրամի (ՀՀՀ) հոգաբարձուների խորհրդի նախագահությունն ստանձնած Հրայր Հովնանյանը:

– Պրն. Հովնանյան, ՀՀՀ-ի շրջանակներում ի՞նչ էր ծրագրված անել 1993-94 թթ. եւ ինչպիսի՞ն էին արդյունքները:

– ՀՀՀ-ն, լինելով երիտասարդ կազմակերպություն, դակաս գործ արեց, քան ծրագրված էր: Աշխատանքները, համենայն դեպս ԱՄՆ-ի մասնաճյուղի, հիմնականում ուղղված էին ադեսի գոտում շինարարության եւ «Ձմեռ» ծրագրի իրագործմանը: Իմ կարծիքով, «Ձմեռ» ծրագիրը հիշ ուշ սկսվեց, քան անհրաժեշտ էր եւ այն հեղուկ վառելիքը, որ նախատեսվում էր դեկտեմբեր-մարտ ամիսներին ջեռուցման կազմակերպման համար, ուշ է հասնում Հայաստան: Ինչ վերաբերում է մյուս ծրագրերին լեռնային շրջաններում ճանապարհների վերականգնմանը, հայ-դարսկական կամուրջի կառուցմանը, գազատարի վերականգնմանը, առա այդ բոլոր աշխատանքները հաջողությամբ ավարտված են: Հատուկ ցանկանում եմ նշել, որ ՀՀՀ-ի ֆինանսավորումն այս տարի կատարվեց տարեսկզբին, հանգանակությունների չափը բողնված էր անհատների խղճին: Ի դասասխան մեր ուղերձների անհատներից ստացվեց մոտ 7 միլիոն դոլար, բնդ որում, Նյու Յորքում եւ Լոս Անջելեսում հավաքվեց 4,5 մլն:

– Պրն. Հովնանյան, Դուք խոսեցիք ՀՀՀ-ի շրջանակներում կատարված աշխատանքների մասին, ի՞նչ կասեիք ԱՀՀ-ի կատարած աշխատանքների մասին:

– ԱՀՀ-ն, որի ներկայացուցիչը ՀՀՀ-ում ես եմ, ուժեղ քաղաքական, լոբբիստական կազմակերպություն է, որի քաղաքներով ամերիկյան կառավարությունը հատկացրեց 18 մլն դոլար Հայաստանի կառավարությանը: Այդ գումարից 15 մլն-ը օգտագործվեց նավթ, իսկ 3 մլն-ը ցորենի սերմնացու գնելու եւ Հայաստան տեղափոխելու համար: ԱՄՆ-ի Պետդեպարտամենտը, հակառակ իմ անհամաձայնության ԱՀՀ-ի դիտորդ լինելու այս դարագայում, միաստրեն ստիպեց մեզ ստանձնել դիտորդի դերը նավթի բաշխման գործում: Բացի դրանից, մեզ ստիպեցին նաեւ զբաղվել ցորենի սերմնացուի բաշխման վերահսկումով: Սերմնացուն Հայաստան է բերվելու ինքնաթիռներով, եւ մարտ ամսի առաջին շաբաթում սկսվելու է սերմնացանը:

– ԱՀՀ-ի կողմից ի՞նչ է ծրագրված անել այս տարի:

– ԱՀՀ-ն ունի գործունեության երկու շատ կարեւոր դարտ միջդետական կապերի (government affairs) զարգացում եւ հասարակական կապերի (public affairs) զարգացում: Առաջինին վերաբերում է մեր լոբբիստական գործունեությունը ԱՄՆ-ի Կոնգրեսում, Պետդեպարտամենտում, կենտրոնական գործադիր հիմնարկություններում: Այդ գործունեությունը դեմ է ծավալվի բացի Վաշինգտոնից, նաեւ բոլոր նահանգներում, բոլոր մակարդակներով: Երկրորդին են վերաբերում հասարակական կապերը՝ հեռուստատեսություն, ռադիոն, մամուլը, [illegible] աշխատանքի եւ հասկանալի ԱՄՆ-ի [illegible]

Ինչպես գիտեք, ԱՀՀ-ն կազմակերպել է ԱՄՆ-ի [illegible]ների, ինչպես նաեւ օտարերկրյա [illegible] թղթակիցների [illegible] բազմաթիվ այցեր: Այստեղ էլ, հասկանալով ԱՄՆ-ի դեսպանի զարմիկների հետագա այցերի կարեւորությունը Հայաստանի համար, ԱՀՀ-ն ջանքեր է գործադրելու այսօրվանից այցեր կազմակերպելու:

ԱՀՀ-ն աշխատանքներ է տանում Միջազգային արժութային ֆոնդից եւ Համաշխարհային բանկից նոր վարկ ստանալու ուղղությամբ: Այդ վարկն անհրաժեշտ է հայկական դրամի կայունացման համար: Կարող եմ ասել նաեւ «Արմոյի» գործունեության մասին, թեեւ այն ուղղակիորեն կապված չէ ԱՀՀ-ի հետ, եւ շահագրգռված եմ նրա աշխատանքներով: Եթե ստացվի ՀՀ կառավարության աջակցությունը, արդեն այս տարի արդեն կսկսվեն աշխատանքներ գազի եւ նավթի փորձնական հորատանցքերի փորման ու սեյսմիկ հետազոտությունների գծով:

– Այս տարի ի՞նչ աշխատանքներ է իրականացնելու ՀՀՀ-ն:

– ՀՀՀ-ի հիմնական խնդիրը սփոփումն ՀՀՀ-ի մասնաճյուղերի աշխատանքի կազմակերպումն է: Նախատեսվում են նաեւ շինարարական աշխատանքներ: Կառուցվելու են դպրոցներ, մանկապարտեզներ, մշակույթի օջախներ եւ հիվանդանոցներ: Ցավոք, մենք չենք կարող իրականացնել ճանապարհաշինարարություն, հիմնարկ-ձեռնարկությունների վերանորոգում, մի խոսքով՝ այնպիսի աշխատանքներ, որոնք մոտակայում կառավարության համար շատի արդյունք կլինեն:

– Ինչպե՞ս է իրականացվելու ՀՀՀ-ի ֆինանսավորումը ընթացիկ տարում:

– ԱՄՆ-ում հավաքված գումարները պետք է ծախսվեն միայն բարեգործական նպատակներով: Դա կնշված է այդ ծախսերի համար ամրագրված օրենսդրությամբ նախատեսված հարկերի հետ: Նախատեսվում է ամփոփել բոլոր հայ ընտանիքների համար տարեկան տուրք սահմանել այդ ընտանիքների տարեկան եկամտի որոշ մասի չափով: Երբ այս հաջողվի, արդեն այս տարի կհավաքվի առնվազն 10 մլն դոլար:

– Ինչպե՞ս են կատարվելու գումարների հատկացումները այս կամ այն ծրագրերին:

– ՀՀ կառավարությունը ՀՀՀ-ի հոգաբարձուների խորհրդի նախագահությունը ներկայացնելու է ֆինանսավորման ենթակա ծրագրեր, եւ մանրակրկիտ քննարկումներից հետո բնդրված ծրագրերի իրականացումը կհատկացվեն համապատասխան միջոցներ:

Վերջում ուզում եմ հայտնել իմ ճանաչությունը Հայաստանից արտագաղթի վերաբերյալ: Հուսով եմ, որ դա ժամանակավոր բնույթ է կրում: Համոզված եմ, որ բոլորը կվերադառնան եւ իրենց հասնող կնեղնեն Հայաստանի կառուցման գործին: Հանդիպելով Հայաստանի պետական գործիչների, անհատների հետ, կարող եմ վստահությամբ ասել, որ այստեղ կան շատ աշխույժ, խելացի, հասարակ մարդիկ, որոնք ի վիճակի են իրենց աշխատանքով շենացնել մեր հայրենիքը: Երբ այդպիսի մարդիկ չլինեին Հայաստանում, արդա ես այստեղ չէի գա: Կոչ եմ անում մեր ժողովրդին սառար կանգնել մեր կառավարությանը եւ միացյալ ուժերով դուրս գալ այս ծանր կացությունից: Համոզված եմ, որ Հայաստանին փայլուն ապագա է սպասում:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Միջազգային

Քննելով Թուրքիայի ներկա տնտեսական վիճակը, The Economist հանդեսի Ստամբուլի թղթակիցը փետրվարի 11-ի համարում գրում է, որ Թանսու Չիլլերի վարչապետ ընտրվելը մեծապես ապահովված էր նրա տնտեսագիտական ընդունակություններով, քանի որ մինչ այդ նա այդ առարկայի գծով դասախոս է եղել եւ ա-

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Վստահության նվազո՞ւմ

ղես Ալոնոմիկայի նախարար:

Սակայն այժմ նա այդ, ինչպես նաեւ այլ բնագավառներում, այնքան է խճճել ամեն ինչ, որ հարցականի տակ է դրել առաջիկա մարտի 27-ին նախատեսված տեղական ընտրություններում իր ճշմարիտ ուժի կուսակցության հաջողությունը, մի բան, որի համար նրան երեւի երբեք չեն ների գործընկերները:

Տիկին Չիլլերի անհաջողություններ կապված են անբուռ թուրքական լիրայի կուրսի անկման հետ: Այն հունվարի 26-ին արժեզրկվել էր 12 տոկոսով, իսկ հետագայում այն ասիճանի հասել, որ բանկերն ստիպված տարեկան կրկնաձով 600 տոկոս էին ՝ցանկանում տալ մեկ օրվա փոխառությունների դիմաց (որն օրական 1.64 տոկոսի է հավասար): Հունվարի 31-ին, ըստ երեւույթին չկարողանալով դուրս գալ ստեղծված բնջուկից, տեղական կենտրոնական բանկի կառավարիչ Բուլենտ Գյուլտեկինը, որին վարչապետը վերջերս էր պաշտոնի նշանակել, հրաժարական տվեց, նշելով, որ եթե կայունացմանը նպաստող վճռական միջոցներ չձեռնարկվեն, վիճակն ավելի է վատանալու: Այժմ արժեզրկումը հասնում է 65 տոկոսի:

Անկումն սկսվեց հունվարի կեսերին, երբ որոշես կառավարության եւ կենտրոնական բանկի միջեւ արժեզրկման առաջն առնելու հարաբերությունների հետեւանք երկու հզոր վարկատու գործակալություններ՝ Standard and Poor-ը եւ Moody-ն, ուժեղ հարված հասցրին Թուրքիայի տնտեսական կառողությանը: Վարկատու գործակալություններ խնամ անհանգստացած էին ծախսերը վերահսկելու կառավարության ակնհայտ ձախողություններից, ինչպես նաեւ հարավարեւելյան շրջանների բդչական աղետաձրության հավանական ընդարձակումից: Անցյալ տարվա վերջում մասնավոր հատվածի վարկավարման պահանջարկները հասել էին ազգային համախառն արտադրանքի 16 տոկոսին:

Թուրքիայում, ինչպես եւ այլուր, կառավարության ծախսերի աճը ընտրությունների նախօրյակին սովորական երեւույթ է, բայց հարցը ճգնաժամի է վերածվել, այն պատճառով որ տիկին Չիլլերը չի կարողացել զանձատան եւ կենտրոնական բանկի աշխատակիցների միջեւ համաձայնություն ստեղծել: Իր «դավանած» ներկա ազատականացման քաղաքականության ներքո չափազանց բույլ է տարադրամի փոխանակման վրա դրված հսկողությունը: Կենտրոնական բանկի բարդարկած փողերն անմիջապես տարադրամի են վերածվում, անխուսափելի դարձնելով ազգային փողի արժեզրկումը, որի պատճառած վնասը բարձական բանկերին հասնում է 1.2 միլիարդ դոլարի:

Սակայն տրամվում է, որ այդ գումարը եռապատկվի, եթե շուտափույթ միջոցառումներ չգործադրվեն: Բայց տիկին Չիլլերին շատ ժամանակ չի մնում գործելու, մանավանդ որ նրան առայժմ չի հաջողվել համախմբել ծայրահեղ հասանիներին չհարող ոչ իսլամական միաստեղական շարժման եւ վերջապես, երկրորդ բյուրոյի ֆրանսիական հակահետախուզության 300 հազար գործերում: Ոստիկանական հազարավոր զեկուցագրեր եւ մատնություններ նվիրված են լրագրողներին: Մամուլը գտնում էր ոստիկանության հատուկ հսկողության տակ, որը բաց տեղյակ էր, թե ինչ էր կատարվում խմբագրություններում:

Պատմաբանները, անկասկած, սենսացիոն նյութեր կգտնեն Ֆրանսիայի կոմունիստական եւ ֆաշիստական շարժումների մասին: Անհայտ փաստերը բույլ կտան նոր լույս գնահատել քաղաքական կուսակցությունների, արհմիությունների, առանձին գործիչների գործունեությունը:

Այդ փաստաթղթերը ֆաշիստներն արտահանել էին համաշխարհային երկրորդ պատերազմի ժամանակ, իսկ 1945 թվականին հայտնաբերվել էին խորհրդային զինվորների կողմից Չեխոսլովակիայում եւ Լեհաստանում: Հարավարի համալսարանի պատմաբան Պատրիսիա Հրիմոբեդին հաջողվեց, հենվելով խորհրդային աղբյուրների վրա, վերականգնել արխիվների ողին: Նրանք հայտնվեցին Պրահայից հյուսիս Գորնայա Լիբավայում գտնվող մի հին դղյակում: Մոսկվա հասցեագրված հեռագիրներում ասվում է, որ գտնվել են «գործեր», որոնք նվիրված են Ստալինին, Մոլոտովին, Կալինինին, Կագանովիչին, խորհրդային պատերազմական ավիացիայի հրամանատարությանը եւ տնտեսությանը: Փաստաթղթերի մի մասը գերմանացիները հասցրեցին ոչնչացնել:

Լավրենտի Բերիայի կարգադրությամբ արխիվները բերվեցին Մոսկվա: Ներքին գործերի ժողկոմատը մատիր էր դրանք օգտագործել ֆրանսիական գործիչների գլխավորությամբ նրանց, ովքեր գաղտնի կապ էին պահպանում նացիստների հետ, հավատարմության համար:

...Մոսկվայի եւ Փարիզի միջեւ արխիվները վերադարձնելու բանակցությունները մի քանի տարով ձգձգվեցին: Ռուսաստանը խնդրեց, այդ նյութերը հանձնելու փոխարեն օգնել ընդերքագրական, միկրոֆիլմեր նկարելու սարքերով, համակարգիչներով եւ այլն: Ռուսական կողմը նաեւ ցանկանում էր ֆրանսիացիների աջակցությամբ նկարահանել վերադարձված փաստաթղթերը: Սակայն ֆրանսիական ազգային արխիվների այն ժամանակվա տնօրեն Ժան Ֆավյեն, որն օրերս գլխավորեց Ազգային գրադարանը, պնդում էր, որ իր նման հարց առաջադրելը «քաղաքավարի չէ», եւ որ «մենք մատիր չենք վճարել այն բանի համար, ինչը մեզանից գողացել են»:

Դրա հետեւանքով ֆրանսիական կողմը պարտավորվեց իր հաշվին «իրենց բյուջետային հնարավորությունների սահմաններում», նկարահանել Ռուսաստանին հետաքրքրող փաստաթղթերը:

«Известия», 4 փետրվար

ԹՈՒՐՔԻԱ

Մոսկվան արխիվները վերադարձնում է Փարիզին

«Սկիզբը դրված է, հայտարարեց Ռուսաստանի արխիվների դեպարտամենտի նախագահ Ռուդոլֆ Պիխոյան՝ Մենք պայմանագիր ենք ստորագրել եւ Մոսկվայում գտնվող ֆրանսիական փաստաթղթերը վերադարձնում ենք տիրոջը»:

Կես դար 20 տոննանոց այդ նյութերը գտնվում էին հատուկ արխիվում, զբաղեցնելով 6.5 կիլոմետր երկարությամբ դարակներ, հիանալի վիճակում, մշակված, գրանցված, կազմված եւ պատրաստ օգտագործման համար:

50-ական թվականների կեսերից ֆրանսիացիները փորձում էին վերադարձնել այդ նյութերը, սակայն միայն 1991-ին ստորագրվեց առաջին համաձայնությունը, որին հետեւեցին էլի մի քանիսը: 1994 թվականի վերջին ամբողջ 20 տոննան կվերադարձվի Ֆրանսիային: Պե՞տք է, արդյոք, խոսել, թե ինչպիսի անհամբերությամբ են Փարիզում սպասում փաստաթղթերին, որոնք լրացուցիչ լույս կսփռեն 18-20-րդ դարերի կարեւորագույն իրադարձությունների վրա: Դրանց թվում են այնպիսի «հիմքեր», որոնք կդպահանջեն հոգաստար վերաբերմունք:

Այդ «հիմքերը» դրված են 50 ճշգրտորեն գործիչների անձնական արխիվներում, որոնցից են Լեոն Բլումը, Ժոլ Մոկը, Անդրե Մորուան, Ռոբիդիների ընտանիքը, մասոնական օթյակների երկու հարյուր տարվա նյութերում, ֆրանսիական

ՀԱՄՈՌՈՏ

Համաձայնեցին փորձի փոխանակմանը

ՄՈՍԿՎԱ, 15 ՓԵՏՐՎԱՐ, ԻՏԱՐ-ՏԱՍՍ ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ռուսաստանը կարող է եվրոպական ժողովրդավարությունների փորձի վրա հենվել դաշնակցային կառուցված քի հարցերը լուծելիս, այս կարծիքն արտահայտեց Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինը միջազգային այն խորհրդաժողովի մասնակիցներին հղած ողջույնի ուղերձում, որը կազմակերպվել է եվրոպայի խորհրդի մասնակցությամբ: Խորհրդաժողովը փետրվարի 15-ին բացվեց Մոսկվայում:

Վերջերս ընդունված երկրի հիմնական օրենքում «կա դաշնակցային մոդել, որով նախատեսվում է սուբյեկտների իրավահավասարություն»: Սակայն, ելնելով նի կարծիքով, սահմանադրության դրույթները դեռ պետք է հագեցվեն իրավական բովանդակությամբ: Այս առումով կարեւոր է եվրոպական պետությունների փորձը: Եվրոպական երկրներից Մոսկվա եկած քաղաքական ու հասարակական գործիչները, իրավաբանները համաձայնել են ռուսաստանցիների հետ կիսել այդ փորձը, նշեց նա:

Կիմ Իր Սենի առաջարկը Բիլ Քլինթոնին

ՏՈՒՐՈ, 16 ՓԵՏՐՎԱՐ, ԻՏԱՐ-ՏԱՍՍ ԱՐՄԵՆՊՐԵՍ: ԱՄՆ նախագահ Բիլ Քլինթոնին ԿԺԴՀ ղեկավար Կիմ Իր Սենի հղած ուղերձով առաջարկվում է անցկացնել պատմության մեջ ամերիկա-հյուսիսկորեական առաջին բարձր մակարդակի հանդիպումը: Ուղերձը Սոլիտակ տան ղեկավարին է հանձնել ամերիկացի ավետարանչական Բիլլի Գրեհամը, որը Փենյան էր այցելել հունվարին վերջերին:

Հարավկորեական աղբյուրները նշում են, որ Կիմ Իր Սենն ուրվագծել է նույնիսկ Բիլ Քլինթոնի հետ հնարավոր հանդիպման նախապատրաստման մեխանիզմ, առաջարկելով սկսել հատուկ դեսպանորդների փոխանակումից եւ կոչ անելով Նյու Յորքում աշխատանքային խորհրդակցություններ անցկացնել այդ փուլի իրագործման եղանակները որոշելու համար:

Ամերիկյան կողմի արձագանքն առայժմ անհայտ է: Սակայն Սեուլում փորձագետները կարծում են, որ Կիմ Իր Սենի ուղերձը լուրջ վկայություն է այն բանի, որ նա արտաքին քաղաքական առաջարկ է դուրս եկել ԿԺԴՀ միջուկային զենքի խնդրի վերջնական լուծման համար:

ՄԱԳԱՏԷ-ի փորձագետները կայցելեն ԿԺԴՀ

ՎԻԵՆՆԱ, 16 ՓԵՏՐՎԱՐ, ԻՏԱՐ-ՏԱՍՍ ԱՐՄԵՆՊՐԵՍ: ԿԺԴՀ-ն հաստատել է, որ իր միջուկային օբյեկտներ այցելեն Ատոմային էներգիայի միջուկային գործակալության (ՄԱԳԱՏԷ) փորձագետներ: Գործակալության մամլո ծառայության հայտարարության մեջ ընդգծվում է, որ ՄԱԳԱՏԷ-ն մտադիր է ընձեռված հնարավորությունից օգտվել եւ ամենաշուտ ժամկետներում իր ներկայացուցիչներին կգործուղի ԿԺԴՀ:

MAGNUM Inc.

«ՄԱԳՆՈՒՄ» ՖԻՐՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է

Երեւան-Սաֆրոպոլ, Երեւան-Բրեստ

չվերքների ավիատոմսեր

Տուրիստական բաժինն առաջարկում է ուղիղ ավիաչվերքներ՝

Երեւան-Կրակով (Լեհաստան), Երեւան-Պլովդիվ (Բուլղարիա+3 օր Սոֆիա), Երեւան-Ուրումչի (Չինաստան), Երեւան-Հալեպ, Երեւան-Դուբայ (Արաբական էմիրություններ), Երեւան-Փարիզ-Լոս Անջելես, Նյու Յորք

Բաժինն ամենակարճ ժամկետներում կձեւակերպի ձեր մեկնելու փաստաթղթերը եւ արտասահմանյան անձնագրերը: Ֆիրման հրավիրում է համագործակցության ինչպես ԱՊՀ երկրներ, այնպես էլ արտասահման կոմերցիոն ավիաչվերքներ կատարող բոլոր կազմակերպություններին, ավիատոմսերի իրագործման համար:

Ձեր հասցեն՝ Տիգրան Մեծի պող. թիվ 23
(Մետրոյի «Զորավար Անդրանիկ» կայարանի դիմաց) Հեռ. 57-03-52
Ամեն օր ժ. 10:00-17.00 (բացի կիրակի օրից)

ԿԱՐԾ

«Զուգարանը լուրջ գործ է», ասում են Ստամբուլում

Ըստ երեւույթին, Ստամբուլի բնակիչները հիշել են ֆրանսիական «Սկանդալը Կլոմեդում» հին կինոնկարը: Այդ զվարճալի պատմությունը պատմում էր մի փոքրիկ քաղաքի բնակիչների արկածների մասին, հանդիսավոր կերպով բացում էին հասարակական առաջին զուգարանը՝ այնպիսի մի կլոր խցիկ, որից երեւում էին կարճ ժամանակով այնտեղ մտած մարդի եւ գլուխը եւ ոտքերը: Դա իրոք ծիծաղելի էր:

Իսկ Նոր տարվա նախօրյակին Թուրքիայում անցկացվեց առաջին գիտաժողովը «Զուգարան-93» անվանմամբ: Այդ մասին հայտնեց Ստամբուլի «Միլլիյեթ» թերթը՝ մանգամայն լուրջ, հարգալից եւ տրամանակով ամենամեծ թերթը երկրում:

Պետք չէ ծիծաղել, զգուշացնում է թերթը, որովհետեւ խնդիրը շատ լուրջ բանի մասին է՝ մեր հիգիենայի: Հանդիսավորի մասնակիցները քննարկեցին այնպիսի հարցեր, ինչպիսիք են զուգարանների միօրինակացումը, կահավորումը, սպասարկումը, սանիտարական պահանջները: «Մեր հիմնադրամը, նշեց «Երկու գրա» հիմնադրամի նախագահ դոկտոր Ղալիբ Թոնալքոիը, աշխատում է մարդկանց մեջ սերմանել զուգարանի կուլտուրան ամենալայն իմաստով: Մենք ուշադրություն ենք դարձնում ամեն ինչի վրա, այդ թվում այն բանի, որ բազմամիլիոն մեգապոլիսներում մարդը չարդի «անհարմար դրության» մեջ ընկնելու սպառնալիքի տակ»:

Այդ անսովոր գիտաժողովի կազմկոմիտեի անդամ Նեջլի Զարաֆոլի հայտարարությամբ, տվյալ միջոցառումը բոլորովին ավելորդ չէ, քանի որ անցկացված հարցումները հայտնաբերեցին քաղաքային իշխանությունների աղաղակող անձեռնհասությունը այն տեղերի պահման հարցերում, «որ նույնիսկ սալաքարեր ոտքով են գնում»: Դրանում մենք նրանց կօգնենք, ընդգծեց նա: ■

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մշակույթ

Հայ թատրոնը բանդեցին գլխավոր ռեժիսորները: Կամաց-կամաց թուլացան Արմեն Գուլակյանի թատրոնի հզոր կառույցները: Նա ինքն ազգային, պետական մտածողություն չուներ, ավելսի մտածողություն ուներ, եւ իրեն թվում էր, թե իր հանճարը կդահի թատրոնը: Ժամանակին իրոք դահում էր: Բայց հետո, երբ ինքն արդեն չկար, ասիճանաբար փլուզվեց այն:

Հեղափոխության դեմ մի քանի անցավ չէ՞ մեր գլխով, բայց թատրոնին չդիպավ: Գլխավոր ռեժիսորները մտածում են, որ իրենք են թատրոնը եւ ոչ թատրոնն իրենց մեջ: Փառամոլությունը թույլ չի տալիս իրենց կողքին մի ուրիշ ռեժիսոր տեսնել: Նվասացվում է դրամատուրգը՝ ծանոթը չէր դասճառը: Դա մեկ ու կես տարի տեւեց: Մենք հետ բերեցինք Վիոլետին: Բայց երկար չմնաց: Հեռանալուց առաջ ասաց ես Արմեն Խանդիկյանի հետ չեմ կարող աշխատել:

Գուժ Մանուկյան, Իշխան Ղարիբյան, Էմմա Վարդանյան, Ժասմեն Մարյան, Կիմ Երիցյան, Ռաֆայել Քոթանջյան եւ ես՝ ձեր խոնարհ ծառան, գնում-գալիս ենք թատրոն, բայց գործ չենք անում: Մեր գլխավոր ռեժիսորը մեզ հետ չի աշխատում: Հասկանալի է, իր տեսակը, իր դասկերացումներն այլ են, իսկ մենք ազգային, ավանդական, զգացմունքի, հոգեբանության թատրոնի կողմնակից ենք: Պարզ է, ինձ, մյուսին չեն կարող ասել՝ միասին փոքացեք, միասին խոնարհվեք:

Վաղարշ Վաղարշյան, Մկրտիչ Ջանան, Հասմիկ, Արուս Ոսկանյան, Օլգա Գուլազյան, Գուրգեն Ջանիբեկյան, Ավետ Ավետիսյան, Վահրամ Փափազյան, որն ամեն ինչից վեր էր ու անզուգական...Ժողովուրդն այն ժամանակ մեծերի կարիք ուներ: Չէ, հիմա հաղթական մեծերի կարիքն էլ չունի: Երբ հաղթականության մեջ Վահրամ Փափազյան ծնվեր, երջանիկ ժողովուրդ ոչիի լինեիք: Թատրոնում եւս Փափազյան չի ծնվի, որովհետեւ թատրոնի ղեկավարն ուզում է առաջինն ինքը լինել եւ ոչ թե դերասանը, որի համար էր ժողովուրդը թատրոն գալիս (տոմսի համար որ փող էր վճարում, հո չէ՞ր մտածում գնում, տեսնեմ, թե ռեժիսորն օյին-բազությունները ոնց է կառուցել:

«... Երբ թեմ եմ բարձրանում, Լեւոն Թումանիկյանին դրսում եմ բաղնում: Ներս է գալիս Մազուրի Համոն, Ռիչարդ III-ը, Մսյո Ամիլկարը... Ես չկամ: Գրիմ չեմ անում, բայց երեւի փոխվում եմ, որովհետեւ հանդիսատեսը փողոցում ինձ չի ճանաչում որպես դերակատար»:
Այս անգամ բեմում հենց ինքն է՝ Լեւոն Թումանիկյանը (Երեւանի դրամատիկ թատրոն), կուլիսների հետեւում բաղած իր կերտած բոլոր կերպարները, որոնք լուռ սպասում են անում: Լեւոն Թումանիկյանը «Վերվարածներ» վեպի, հիմա արդեն պիեսների, դասմվածքների հեղինակն է (հին ու բավական առօրեական դասմություն՝ դերասանը գրիչ է վերցնում): Իսկ կինոյից վաղուց է հրաժարվել. «Կինոյից բան չեմ հասկացել: 1965 թ. «Վերջին նետումը» ֆիլմից հետո այլեւս չցանկացա նկարահանվել: Սիրում եմ բեմում աղրել, կինոն չի աղրեցնում...»:
ՌՈՒԶԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Մենախոսություն

Քնանա՞լ, Քնանա՞լ

ԼԵՎՈՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

թատրոնի հիմքը: Անհետանում է ճնշադասությունը: Նսեմացվում է դերասանի դերը: Անունն, իհարկե, փոխվել է. հիմա գլխավոր ռեժիսորը կոչվում է գեղարվեստական ղեկավար, որը նաեւ բեմադրում է:

Ի սեր ասածի, թատրոնի գեղարվեստական ղեկավարը պետք է ընտրվի պետական գործիչների, թատերագետների, դրամատուրգների, բեկուզ դերասանների միջից, որն ունի մշակութային լայն ու դրագմատիկ մտածողություն ու կարող է ղեկավարել թատրոնը: Սա է փրկության միակ ելքը: Իսկ ռեժիսորներն իրենց հատիճներով պետք է տեղավորվեն մշակույթի նախարարությունն: Եվ թատրոն հրավիրվեն այն բանից հետո, երբ թատրոնի գեղարվեստական ղեկավարը պետք է ընտրվի պետական գործիչների, թատերագետների, դրամատուրգների, բեկուզ դերասանների միջից, որն ունի մշակութային լայն ու դրագմատիկ մտածողություն ու կարող է ղեկավարել թատրոնը: Սա է փրկության միակ ելքը: Իսկ ռեժիսորներն իրենց հատիճներով պետք է տեղավորվեն մշակույթի նախարարությունն: Եվ թատրոն հրավիրվեն այն բանից հետո, երբ թատրոնի գեղարվեստական ղեկավարը կորոշի, թե ինչ է բեմադրվելու եւ ով կարող է լավագույնս իրականացնել այն:

Ուրեմն այսպես, գալիս է, բեմադրում է, գնում է: Թատրոնի ներքին գործերին չի խառնվում: Իսկ գլխավոր ռեժիսորները հիմա ի՞նչ են անում. ամենալավ դիպեսն իրենք են բեմադրում, լավագույն դերասաններին իրենք են դերեր տալիս, մյուս ռեժիսորներին էլ տակի մնացածն են տալիս: Եվ բանի որ նրանք եսասեր են, մյուսին լավն անելու հնարավորություն չեն տալիս: Այսպես գնաց-կորավ Գրիգոր Մկրտչյանի նման տաղանդավոր ռեժիսորը:

Ավելին, գլխավոր ռեժիսորներն այսօր ավելի շաս ուրիշ բաներով են զբաղվում, քան բեմադրելով (մի՝ մոռացեք, որ նրանք խելոք մարդիկ են, իսկ փող վասակել պետք է): Եվ այնքան են իրենց հզոր զգում, որ Վլադիմիր Մարյանի, Գուժ Մանուկյանի պես տաղանդավոր դերասաններին, որոնք «առանց տեղեկացնելու» մեկնել էին Ղրիմ՝ նկարահանումների, վարդեսի կոչումից զրկում ու «ոազավիկի» կարգավիճակ են տալիս: Այս մասին բոլորն իմացան, բայց ո՛չ մշակույթի նախարարության պետքն էր, ո՛չ թատերական գործիչների միությունն, ո՛չ էլ հասարակությունն: Ժամանակին ու՞մ մտքով կանցներ Հրաչյա Ներսիսյանին նկատողություն անել խմած վիճակում թատրոն գալու համար: Ահա նա Հրաչյա Ներսիսյանն էր:

Երեւի հիշում եք, Վիոլետ Գեւորգյանն ուղղակի փախավ: Ոչ, Բոքո մեկնելու հետ կապված հալածանքը չէր դասճառը: Դա մեկ ու կես տարի տեւեց: Մենք հետ բերեցինք Վիոլետին: Բայց երկար չմնաց: Հեռանալուց առաջ ասաց ես Արմեն Խանդիկյանի հետ չեմ կարող աշխատել:

Գուժ Մանուկյան, Իշխան Ղարիբյան, Էմմա Վարդանյան, Ժասմեն Մարյան, Կիմ Երիցյան, Ռաֆայել Քոթանջյան եւ ես՝ ձեր խոնարհ ծառան, գնում-գալիս ենք թատրոն, բայց գործ չենք անում: Մեր գլխավոր ռեժիսորը մեզ հետ չի աշխատում: Հասկանալի է, իր տեսակը, իր դասկերացումներն այլ են, իսկ մենք ազգային, ավանդական, զգացմունքի, հոգեբանության թատրոնի կողմնակից ենք: Պարզ է, ինձ, մյուսին չեն կարող ասել՝ միասին փոքացեք, միասին խոնարհվեք:

Խորեն Աբրահամյանը՝ տաղանդավոր դերասան, որն ի դեղ, առաջինը կինոյի լեզուն, բնականը բերեց թատրոն (մինչ այդ դարբեսիկ հնչեանգը բեմի միանձնյա տիրակալն էր, եւ գրիմով ծեփված դեմքերը...): Խորենը նաեւ լավ ռեժիսոր է «Ջոն արա», «Հացավան», եւ իսկապես իրավունք ուներ Վ. Աճեմյանից, Հր. Ղափլանյանից հետո ժառանգելու Գ. Սունդուկյանի անվան թատրոնը, եւ դա իր թատրոնը դիտի դառնար: Ավաղ, չկարողացավ դահել, եւ այն հենց իր աչքի առաջ քանդվեց: Բոլորը փախան: Ինչու՞: Դերասանին դեր տար, փող մի տար, դերասանն էլի կխաղա: Մենք դրանով ենք աղրում, մեր փառասիրությունը ծափի մեջ է: Այսօրվա փողոցային շուկայական հարաբերություններն մեզ համար չեն: Մենք չենք կարող աղրել առանց ծափերի:

Իսկ գիտե՞ք, թե ինչպես էին ծափահարում Սունդուկյանի թատրոնին: Այստեղ էին հավաքվել Գյումրվա, Թիֆլիսի, Պոլսի մեծերը: Հետո ինքն էլ ճյուղավորվեց, ինքն էլ մյուս թատրոններին տվեց եւ մինչեւ հիմա էլ տալիս է քանդվելու դայմանով: Մասով էին ցույց տալիս այս թատրոնի դերասաններին, ակադեմիա էր, (առաջին դերասանը ես էի, որ գնացի):

Ինչ ասում էր Մհեր Մկրտչյանն է խոսում, գնամ, նայեմ:

Բայց թատրոնն իրեն չի սպասել, մարդու հետ եկած առաջին արվեստն է եւ կվերանա մարդկության հետ: Իսկ բողոքել հեռանա՞լ հայրենիքից: Ես չեմ գնա: Զավակներս հետ վերջին մոհիկանները կլինենք: Ազգի կաթողիկոսը, նախագահն ինձ համար անձ չեն, սիմվոլ են: Մենք համարյա հոս է գալիս՝ եղբոր արյան հոտ, քաղաքացիական կռիվ, սա արդեն անբարոյականություն է...

Վարագույր

ՄՈՍԿՎԱ

Կամերային երգչախումբը տոնեց հոբելյանը

ՏԻՎԱՆ ԲԱԼԱԳԱՆՅԱՆ

ՄՈՍԿՎԱ, 15 ՓԵՏՐՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Մոսկվայի հայկական կամերային երգչախումբը նշեց իր առաջին հոբելյանը: Հինգ տարի առաջ դրոֆեսիոնալ երաժիշտ, խմբերգային արվեստի խանդավառ եւ վարպետ Նելլի Անդրեասյանի հիմնած երգչախումբն արդեն իրեն դրսեորել է որպես ուրույն ստեղծագործական ոճ ձեռք բերած հասուն կոլեկտիվ: Նրա հաճախակի ելույթները Մոսկվայի դեպատական համալսարանում, տարբեր համերգասրահներում եւ բեմահարթակներին մշտապես հաջողություն են ունենում ոչ միայն հայ ունկնդիրների, այլեւ դասական երգի իսկական գնահատողների շրջանում: Դրան նպաստում է ռուս եւ հայ հոգեւոր, դասական եւ բանահյուսական երաժշտությունից կազմված հարուստ երգացանկը:

Փետրվարի 14-ին Մոսկվայում Հայաստանի Հանրապետության մշտական ներկայացուցչությունում տեղի ունեցավ հոբելյանական համերգ:

Հանդիսավոր մասում խոսվեց այն մասին, որ երգչախումբը օրգանական կապի մեջ է Հայաստանի եւ Ռուսաստանի երաժշտական արվեստի հետ, դպահպանում եւ զարգացնում է լավագույն ավանդույթները: Նշվեց այն օգնությունը, որը ներկայիս դժվարին ժամանակներում կոլեկտիվին ցույց են տալիս Երեւանի եւ Մոսկվայի հասարակական կազմակերպությունները:

Մոսկվայի հայկական կամերային երգչախմբի հոբելյանական համերգը անցավ հայկական հաջողությամբ: Կատարվեցին Սյունեցի, Մաշտոցի, Կոմիտասի, Արենսկու, Ռախմանինովի եւ այլոց ստեղծագործությունները:

ՀՕՄ

Հայ օգնության միությունն այսօր

ԵՐԵՎԱՆ, 15 ՓԵՏՐՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հայ օգնության միությունը, որի կենտրոնական գրասենյակի վարչությունը գտնվում է Բոստոնում, ունի 180 մասնաճյուղ, որից 31-ը Հայաստանում: ՀՕՄ-ի հայաստանյան միավորի ատենադեսուհի Ստելլա Ղազարյանը հայտնել է, որ նախորդ տարվա դեկտեմբերից սկսվել էր եւ մոտ մեկ ամիս տեւեց Հայաստանի դրաշտանության նախարարության համակարգում եւ Արցախի բանակում ծառայողներին հասկացված օգնության բաշխումը («Զինվոր» ծրագիր): Այդ ծրագրի համար ծախսվել է 200 հազար դոլար (բոլոր զինվորներին տրվել է սննդամթերքով եւ առաջին անհրաժեշտության առարկաներով լի մեկական փաթեթ):

ՀՕՄ-ը ներկայումս իրականացնում է աղետի գոտու չորս շրջաններին 2010 նավթավառի բաշխումը (Անիի շրջանում 951 նավթավառ եւ 27.555 լ նավթ, Ախուրյանին՝ 340 եւ 16.445 լ, Թալինին՝ 343 եւ 32.934 լ, Արթիկին՝ 352 եւ 23.558 լ): Բաշխման գործընթացը համաձայնեցված է հումանիտար օգնության կառավարական հանձնաժողովի հետ:

Վերջին օրերին կազմակերպվում են այցելություններ Հայաստանում բնակվող բոլոր վիրավոր ազատամարտիկներին (մոտ 560-ը՝ Երեւանում):

Աղետի գոտում ՀՕՄ-ի ջանքերով կառուցվել է Ախուրյանի շրջանում 3 տուն, Ամասիայում՝ 1, Նոյեմբերյանում՝ 1 բաղամաս՝ 47 բնակելի տներով, որը կկոչվի ՀՕՄ-ի հիմնադիր Հակոբ Սալումյան Ակնունու անունով: Գյուղում կառուցվել է հոգեբանական կենտրոն, Ախուրյանի Արավիր Շիրակյան ավանում ՀՕՄ-ի աջակցությամբ նաճյուղի կողմից կառուցվում է մանկական նախածննդյան հիվանդությունների կանխարգելիչ կենտրոն եւ այլն:

Հայաստանի եւ Արցախի զինվորների համար մոտ օրերս ֆրանսիական կառույց խաչը առաքելու է 45 հազար դոլար գումար:

Ըստ Ս. Ղազարյանի, ՀՕՄ-ը կանանց կազմակերպություն է եւ նպատակ ունի կանանց քաղաքական, սոցիալ-տնտեսական դրաշտանվածության հիմնախնդիրների լուծումն է, ինքնաբերաբար դառնալը, սակայն այսօր դրաշտաված է, եւ նշված խնդիրների լուծումը մոտված է երկրորդ պլան:

ԱԶԳԱԳԻՐ

Խիսաեբի Ինոեի հետ եւս մի հանդիպում

ԵՐԵՎԱՆ, 12 ՓԵՏՐՎԱՐ, ՍՆԱՐՔ: Կես տարվա ընդմիջումից հետո դասական երաժշտության հայաստանյան երկրորդ գուներն առիթ ունեցան նորից հանդիպելու ճապոնիայի դիրիժոր Խիսաեբի Ինոեի հետ: Նրա ղեկավարությամբ Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախումբը կատարեց Լիստի Նախերգանքը, Մոցարտի կոնցերտը՝ տավղի եւ ֆլեյտայի համար (մենակատարներ՝ Ժաննա Հովհաննիսյան, Եվգենի Նոնինյան) եւ Շումանի երկրորդ սիմֆոնիան: 31-ամյա ճապոնացի երաժիշտն ավարտել է Վիեննայի արվեստների ակադեմիան, ելույթ է ունեցել Վարշավայի, Բրատիսլավայի, Բոնոյի ֆիլհարմոնիկ նվագախմբերի հետ: Հաջորդ կիրակի՝ փետրվարի 20-ին, Արամ Խաչատրյանի անվան համերգասրահում տեղի կունենա Խիսաեբի Ինոեի մասնակցությամբ հաջորդ համերգը: Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախումբը նրա ղեկավարությամբ կկատարի Ռիմսկի-Կորսակովի, Շումանի, Պրոկոֆեւի ստեղծագործություններից:

Տ. Թումանյանի ծննդյան 125-րդ տարեդարձը

Ազգային օպերայի եւ բալետի ակադեմիական թատրոնի Հայելադաս սրահում փետրվարի 19-ին, ժամը 14-ին տեղի կունենա Հովհ. Թումանյանի ծննդյան 125-րդ տարեդարձին նվիրված համերգ: Գեղարվեստական ղեկավար՝ Տիգրան Լեւոնյան: Մուտքն ազատ է: ■

ՏՈՒՐԻԶՄԻ ԵՎ ԷՔՍԿՈՒՐՍԻԱՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Տուրիզմի եւ էքսկուրսիաների հայկական հանրապետական խորհրդի արտասահմանյան եւ ներքին տուրիզմի վարչությունը հրավիրում է բոլոր ցանկացողներին ճանապարհորդության հետեւյալ երթուղիներով:

ԵՐԵՎԱՆ-ՀԱԼԵՊ-ԵՐԵՎԱՆ
ուղիղ չվերթով փետրվարի 19-ին եւ յուրաքանչյուր 7 օրը մեկ

ԵՐԵՎԱՆ-ՊԼՈՎԴԻՎ-ԵՐԵՎԱՆ
ուղիղ չվերթով փետրվարի 22-ին եւ յուրաքանչյուր 14 օրը մեկ

ԱՐԱԲԱԿԱՆ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ-
փետրվարի 18-ին եւ յուրաքանչյուր 7 օրը մեկ:

Ցանկացողները դիմեն «Երեբունի» հյուրանոց, 3-րդ հարկ, սենյակներ 22, 27, 28 կամ զանգահարեն 56-04-80, 56-06-35, 58-76-26:
«Անի» հյուրանոց, սենյակ 503, հեռ. 594503

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մարզական

ՖՈՒՏԲՈԼ

Մրցաշրջան-94-ին քիչ ժամանակ է մնում, մինչդեռ խաղացանկը դեռ պատրաստ չէ՝ ինչո՞ւ

ԵՐԵՎԱՆ, 15 ՓԵՏՐՎԱՐ. ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ. Ֆուտբոլի նոր մրցաշրջանի մեկնարկին մնացել է համարյա մեկ ամիս. մարտի 20-ին կսկսվի գավաթի խաղարկությունը, իսկ ապրիլի սկզբին կմեկնարկի Հայաստանի ախոյանությունը: Բնականաբար, այժմ նախապատրաստության եռուն ժամանակաշրջանն է: Թիմերն ամենօրյա մարզումներ են անցկացնում ոչ միայն տարբեր մարզասրահներում, այլեւ ձյան վրա: Առդեն կայացել են եւ առաջին ստուգողական հանդիպումները:

Ֆուտբոլային մրցաշրջան-94-ին քիչ ժամանակ է մնում: Մինչդեռ խաղացանկը դեռ պատրաստ չէ: Ինչո՞ւ: Այս հարցը Նոյյան Տաղան գործակալության բաժակիցը ուղղեց Ֆեդերացիայի մրցումների անցկացման կոմիտեի նախագահ Ս. Ղազարյանին:

«Սպասում ենք մասնակից 16 թիմերի հայտերին, ասաց նա: Սակայն, ինչպես երեւում է, տեղերում չեն շտապում: Ըստ երեւույթին, թիմերի ղեկավարներին անհանգստացրել է առաջնության նոր կարգ-դահանջը. բարձրագույն խմբի յուրաքանչյուր թիմ ասպարեզ մտնելու իրավունք ստանալու համար պարտավոր է Ֆեդերացիա մուծել 30 հազար դրամ (առաջին խմբի թիմերը՝ 20 հազար դրամ): Պատկառելի գումար է, եթե նկատի ունենանք, որ այստեղեկությունը ամեն մի խաղից առաջ որոնես դաշտի տեր հանդես եկող թիմերը որոշակի գումար (չափը դեռ չի հաստատվել) պետք է վճարեն մրցավարներին: Հավանաբար ոչ բոլորն են ի վիճակի այդ գումարները վճարել: Սակայն, ինչ արած, այլ ելք չկա, եթե մրցումները ցանկանում ենք անցկացնել պատշաճ մակարդակով»:

Եւ այսպես, ֆուտբոլի Հայաստանի Ֆեդերացիայում սպասում են: Կհասցվե՞ն արդյոք բոլոր 16 թիմերի հայտերը: Այս հարցին այսօր ոչ ոք պատասխան տալ չի կարող:

ԵՐԳԻՇԱԿԱՆ ԳՐՇՈՎ

Երեւան-Քարիզ-Դախար...

Առաջարկ խաղախպեհարանին

[illegible]ուսով գարուն է. ուզենք, թե չուզենք: Եւ գաղտնիք չէ, որ գարնան գալուստը հետ բացվում են նաեւ խաղախմբայր Երեւանի փոսերը, որոնք [illegible]նական չարիք են եւ անցորդների, եւ փոխադրամիջոցների համար. [illegible]ճանապարհները հենց այնպես ծրի, տրամադրում որեւէ մեկին: Տ[illegible], մեր հարեւաններն այդպիսի շռայլություն թո՞ւյլ են տալիս: Ախր, նրանք վճարելու դեպքում, նույնիսկ, ճամփա չեն տալիս: Ուրեմն, ասելս էն է, որ Երեւանյան փողոցներ տրամադրելով ավտոարշավորդներին մարզումների համար, կարող ենք նրանց երկրներից եւ հովանավոր ֆիրմաներից ոլահանջել վճար: Իսկ որ նրանք անողայման կվճարեն, կարող եք չկասկածել. էդ ո՞նց է, որ մենք նոր շուկայագետներս, արդեն գիտենք, թե ամեն ինչ ենթակա է վճարման, իսկ այդ արեւմտյան հին ու ֆոխված բիզնեսմենները չգիտեն: Հավատացեք մեզանից էլ լավ գիտեն:

Ուստի, առաջարկում եմ. հավաքված միջոցներով, եթե, իհարկե, դրանք չանհետանան կառավարական միջանցքներում եւ այլեւայլ դոների հետեւում, ուրեմն այդ փողով, որն անկասկած արժույթով է, եւ որն ինչ որ հրաշքով կարող է եւ չանհետանալ կառավարական լաբիրինթոս ուղիներում, հենց այդ դրամով էլ կարկատել-վերանորոգել քաղամայր Երեւանի լայնահուն եւ միաժամանակ, խորտիս փողոցներն ու ոլոդոտաները:

Կարող ենք չմտահոգվել, այն լիաբլի կրավականացնի Երեւանին: Եթե տակն ինչ-որ բան էլ, մնա, կրաժանենք հանրապետության մյուս քաղաքներին (աղեսի գոտին չառաջարկել, այնտեղ հասկացումների այլ աղբյուրներ կան, ասենք «Գրություն», ՀԲԸ-ն եւ այլն):

Ի վերջո, ոչեմ չէ հուսահատվել, թե հաջորդ տարիներին կարող են փողոցները լավ վիճակում լինել: Անհնար է, նորից կգա ձմեռ, եւ նորից նույն դրամությունը: Միայն թե հաջորդ գարնանը, Երեւանում մարզվել ցանկացողների թիվը, հաշվի առնելով անցյալ մրցաշրջանի արդյունքները, ավելի շատ կլինի: Հետեւաբար եւ սպասվելիք շահույթը կմեծանա: Այդ դեպքում, մյուս տարվանից աղեսի գոտու շինությունը եւս կարելի է վերցնել, այդ հոգսից ազատելով Խ. Վ. Սամբոլցյանին, մանավանդ որ նա չար լեզուների տարածած չար լուրերի, նա հրաժարվել է աղեսի գոտուց էլ, փախստականներից էլ:

Վերջում, ակնկալում եմ, որ առաջարկս լուրջ քննարկման առարկա կդառնա խաղախպեհարանում:

Հարգանքներով՝
ԱՐՈՍ ՀՈՎՍԵՓՅԱՆ.

Ֆ. Գ. Խնդրում եմ այս նյութի հոնորարը փոխանցել մայրաքաղաք Երեւանի փողոցների ասֆալտե ծածկույթի կարկատման ֆոնդին, մինչեւ որ կստացվեն ավտոարշավորդների մուծումները:
Ա. Հ.



INTERSERVICE

ԻՆՏԵՐՍԵՐՎԻՍ
Ֆիրմա

հրավիրում է
եոթոյա շրջագայության դեպի
իրանական Քիշ կղզին, որի ընթացքում
դուք կհյուրընկալվեք հարմարավետ ու
ժամանակակից առանձնատներում,
կայցելենք Քիշի հանրահայտ
ակվարիումը, ինչպես նաեւ
պատմական վայրերը:
Ձեզ սպասում է շահավետ առեւտուր
ֆրանսիական եւ արաբական
շուկաներում:
Առաջին չվերթը մարտի 5-ին:

Մեր հասցեն՝ Տերյան 68ա
Հեռախոսներ
562895, 254297, 576203

A STYLE

Տարեկան 560% եւ ավելի

«ԱՐԱՐԱՏ»
ներդրումային ֆինանսական ընկերություն

Մուրհակների առ եւ վաճառք՝
«ԱԴԱՄԱՆԴ» բորսայում:

Հասցեն՝ երիտասարդության պալաս, Նախասրահ
Հեռ.՝ 56-48-83, 56-52-28

A STYLE

airtours

ՏԻԿՆԱՅՔ ԵՎ ՊԱՐՈՆԱՅՔ

«Հայկական ավիաուղիներ» ավիաընկերության «Էյր տուրս» ճամփորդական գրասենյակն ամեն երկուշաբթի իրականացնում է ուղիղ ավիաչվերթներ դեպի Կրակով: Ցանկացողների համար կազմակերպվում է եոթոյա շրջագայություն Կրակովից Բրատիսլավա (Սլովակիա):

ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ

Մարտի 3-ին «Էյր տուրս» ճամփորդական գրասենյակը կազմակերպում է ավիաչվերթ Երեւան-Քիշ (Իրանական կղզի Պարսից ծոցում, ազատ տնտեսական գոտի):

Զբոսաշրջիկները կտեղավորվեն հարմարավետ առանձնատներում, կճաշակեն պարսկական խոհանոցի համադամ կերակուրները, կայցելեն Քիշի բազմաթիվ արեւելյան եւ եվրոպական շուկաներն ու խանութները, որոնք իրենց բազմազանությամբ եւ էժանությամբ մրցակցում են աշխարհի ամենաէժան շուկաների հետ:

Մեր գրասենյակում դուք կարող եք ձեռք բերել նաեւ Յալթա-Ստամբուլ ծովային ճամփորդության ուղեգրեր:

Օգտվեք «Էյր տուրս» ճամփորդական գրասենյակի ծառայություններից եւ հաջողությունը միշտ կուղեկցի Ձեզ:

ՀԱՍՑԵ՝ ՊՈՒՇԿԻՆԻ 43, ՀԵՌ. 53-05-11, 53-39-[illegible]

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՕՐԱԿԱՐԳ

ՂԱՐԱԲԱՂ

Զենքի համակշռությունը անվտանգության գլխավոր երաշխիք

ԵՐԵՎԱՆ, 16 ՓԵՏՐՎԱՐ, ՍՆԱՐՔ: «Փորձը ցույց է տալիս, որ Ադրբեջանը ղարաբաղյան խնդրի խաղաղ կարգավորման չի դիմի, քանի դեռ ենթակա է հարցն ուժային մեթոդներով լուծելու գայթակղությանը», այսօր հայտարարեց ԼՂՀ ժողովրդական Զորի Բալայանը: Նրա խոսքերով, հաշտության բանակցություններ կարող են սկսվել միայն հակամարտ կողմերի զենքի համակշռության դեպքում, որը այլընտրանք չունեցող զսպիչ գործոն է: Դա իր հերթին Լեռնային Ղարաբաղի բնակչության անվտանգության երաշխիք կդառնա: «Այս տեսակետը ես շարադրել եմ Ստրասբուրգում վերջերս կայացած եվրախորհրդի խորհրդաժողովում, որտեղ ինձանվում էր Ղարաբաղի հարցը: Իմ կարծիքով, այդ համաժողովի մասնակիցներն ըմբռնումով ընկալեցին այն», նշեց ղարաբաղցի խորհրդարանականը: Զենքի համակշռությունը, շարունակեց նա, ոչ միայն կարագացնի ղարաբաղ-ադրբեջանական դիմակայության գոտում կրակի դադարեցումը, այլեւ մեծապես կդյուրացնի միջազգային դիտորդների աշխատանքը, եթե, իհարկե, նրանք գան հակամարտության շրջան: «Այս կապակցությամբ Արեւմուտքի, Արեւելքի եւ նույնիսկ ԱՊՀ մի շարք երկրների կողմից Ադրբեջանին արդիական զենքի մատակարարումը միայն յուղ է լցնում արդեն 6-րդ տարին շարունակվող ղարաբաղյան պատերազմի կրակին», ընդգծեց Զորի Բալայանը:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանատունը աշխատանքի է հրավիրում ավտոմեխանիկների, որոնք տիրապետում են անգլերեն լեզվին (գրել-կարդալ):

Ցանկացողները դիմումները պետք է ներկայացնեն մինչեւ փետրվարի 25-ը, դեսպանատան ընդունարանում, 1-ին հարկ:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Վաճառում եմ սեփականաշնորհված քառասունչորս քառակուսի մետր 2-սենյականոց բնակարանս 130 հազ. ընդհանուր մակերեսով, երկկողմանի պատշգամբներով 6x1 եւ 13x2.20 մետր, երկու հեռախոս, երկու խոհանոց, երկու զուգարան:

Հասցեն՝ Լեոյի փ., 9 շենք, բն. 6
Զանգահարել օրվա բոլոր ժամերին
53-46-56, 53-46-57
Հայրապետյան Հենրիկ

ԲԱՆԿԱՆՆԵՐ

Գիվանագետների ընտանիքները հեռանում են Բելգրադից

Հարավսլավիայի Միութենական Հանրապետության արգելանոցարարությունը հայտարարեց, որ ինքը «զարմանքով եւ ափսոսանքով է» ընկալել Բելգրադից արեւմտաեվրոպական որոշ դեսպանների եւ ԱՄՆ-ի դիվանագիտական ներկայացուցիչների ընտանիքների անդամների մեկնումը: Այդ երկրների մյուս խաղաքաղաքացիներ նույնպես հանձնարարություն են ստացել թողնել Հարավսլավիան: Երկրի մայրաքաղաքից արդեն մեկնել են ամերիկացի, բրիտանացի, գերմանացի, հոլանդացի եւ մասամբ ֆրանսիացի դիվանագետների ընտանիքները: Ռուսաստանի դեսպանությունն այս առնչությամբ որեւէ հրահանգ չի ստացել:

«Ոմանք փորձում են Բոսնիայի հարցը լուծել առանց Ռուսաստանի մասնակցության. Կրեմլում ռուս-բրիտանական փաստաթղթերի ստորագրումից հետո ասաց Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինը: Ուզում եմ ընդգծել, որ դա չի հաջողվի»:

Միաժամանակ, Սերբիայի ուղղափառ եկեղեցու սուրբ հայրապետական ժողովը Զեյնեն խաղաղության կայացած արտահերթ նիստում դիմում է հղել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին եւ բոլոր պատասխանատու անձանց, միջազգային ընկերակցության հիմնարկներին ու կազմակերպություններին, խնդրելով անհապաղ վերացնել տնտեսական արգելքն ու պատժամիջոցները, ինչպես նաեւ դադարեցնել սերբ ժողովրդի մեկուսացումը: Ուղերձում մասնավորապես ասվում է.

«Տնտեսական արգելքը եւ պատժամիջոցները իրականում երկիրը դարձրել են մեծ համակենտրոնացման ճամբար, գետտո, իսկ ամբողջ ժողովուրդը դարձել է կոլեկտիվ պատժի կալանավոր, որին ենթարկվում են ամեն տարիքի մարդիկ՝ նորածիններից մինչեւ մահամերձ ծերունիները:

ՄԱԿ-ի եւ միջազգային ընկերակցության խաղաղական վճիռներն ու գործողությունները կոչ են անում պաշտպանել մարդու իրավունքները: Այս կապակցությամբ հարց է ծագում. հանուն ինչի՞ մարդասիրության, ժողովրդավարական իդեալների, մարդու իրավունքների պաշտպանության կարող են աղարագվել անգութ միջոցառումներ:

Մեր ժողովրդի իսկական ողբերգական վտանգի հիման վրա, մենք պետք է վկայություն տանք ասենք եւ մարդկանց առջեւ, որ որեւէ երկրի կամ ժողովրդի դեմ կիրառվող նմանօրինակ պատժամիջոցներ բարոյազուրկ են եւ անմարդկային: Բարի մտադրություններ չեն կարող իրականացվել չար մեթոդներով: Մեր



եկեղեցին եւ մենք ամենքս ի սրտե շնորհակալություն ենք հայտնում աշխարհի բոլոր կողմերից մեզ ուղարկվող մարդասիրական որեւէ օգնության համար: Բայց այստեղ եւս անհնար է հարց չտալ: Երբ մի ամբողջ ժողովուրդ հայրենական եւ արտասահմանյան խաղաքաղաքացիների սխալների պատճառով գտնված է անարգանքի սյունին, զրկված իր մասին հոգալու, բնականոն աղրելու, աշխատելու եւ արարելու հնարավորությունից:

Ուստի, երբ ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդն իրոք ղեկավարվում է մարդասիրական նկատառումներով, ինչը բնական է, մենք իրավունք ունենք ակնկալել դրա լիակատար դրսեւորումը մարդասիրական գործերում, կոնկրետ դեպքում անմարդկային պատժամիջոցների շատ դադարեցման գործում: Իսկ եթե դա տեղի չունենա, ապա նոր աշխարհակարգի մարդկայնության հանդեպ վստահությունն ավելի ու ավելի անբուռն կդառնա, իսկ անհայի եւ եւ հանդուրժության վրա կախված սպառնալիքը ավելի ու ավելի ակնհայտ», եզրակացնում են սուրբ հայրերը:

ՏԵՍԱԼՆԵՐ

Ամերիկյան մամուլը Թուրքիայի ռազմական պատրաստությունների մասին

ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ. «Ջեյնս դիֆենս ուիքլի» շաբաթաթերթը (22-ը հունվար, 1994) «Թուրքիան երկարաձգում է զորակոչը» վերնագրով հոդվածում հաղորդում է, որ Թուրքիան սանեցրել է զինծառայողների զորացրումը եւ զորակոչը երկարաձգել է եւս հինգ ամսով: Նախարարների կաբինետի այս որոշումը ընդունվել է անցյալ տարի եւ մինչեւ այժմ գաղտնի էր պահվում: Թուրքիայի ազգային պաշտպանության նախարար Մեհմեդ Գալիսանսիզիի հաղորդման համաձայն, մոտավորապես 250000 մարդ խուսափում է զորակոչից, եւ այդ երեւույթի դեմ միջոցառումներ են ձեռնարկվում: Այս որոշումն ընդունելու մյուս պատճառը Իրաքի շարունակվող աղտոտությունն է: «Էյրն դիֆենս ջորնալի» հունվարյան համարում հաղորդվում է այն մասին, որ ԱՄՆ պաշտպանության նախարարությունը Կոնգրեսին տեղյակ է պահել Թուրքիայի հարցման մասին վերջինս զենք ու զինամթերք վաճառելու, ինչպես նաեւ «Նորս» տիպի չորս ֆրեգատներ (որոնք պետք է վարձով տվեն Թուրքիային) տեխնիկական սարքավորումներով ապահովելու վերաբերյալ: Զինամթերքի մեջ մտնում են հակաօդանավային 40 հրթիռ, «Հարպուն» տիպի 32 հրթիռ, ՄԿ-46 մոդ-5 տեսակի 64 տորպեդ, 20 մմ-անոց «Ֆալանքս» տիպի բնդանոթի 4400 արկ, 5/54 տրամաչափի 2800 ռազմամթերք (այդ թվում լուսածրող եւ ուսումնական), ձայնային լողաններ եւ այլ սպառազինություն, մեստաղաթիթեղյա թերթիկներ նեղող սարքավորումներ, տեխնիկական տվյալներ, գրականություն, մարգարտներ եւ այլն: Գործարքի բոլոր մանրամասների համար պատասխանատու է ԱՄՆ-ի ռազմածովային նավատորմի նախարարությունը: ■

ՀԱՄԱՌՈՏ

Խորհրդակցությունը հետաձգվել է

ԲԱԲՈՒ, 16 ՓԵՏՐՎԱՐԻ, ՍՆՍ ՊՐԵՍ ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: ԱՊՀ-ի երկրների կառավարությունների ղեկավարների մարտի 3-4-ը նախատեսված հանդիպումը հետաձգվել է մարտի կեսերին: Ինչպես հայտնել է ԱՊՀ-ի գործադիր քարտուղարության մամլո ծառայության աշխատակից Իվան Պաշկովիչը, դա կապված է հարցերի ավելի մանրամասն մշակման անհրաժեշտության հետ: Հիմնականը ԱՊՀ-ի տնտեսական դաշինքի պայմանագրի իրագործումն է: Նաեւ նշել են, որ խորհրդակցությունն սկսվելուց առնվազն երկու շաբաթ առաջ կառավարությունների ղեկավարները կստանան Մինսկում քննարկվելիք փաստաթղթերի եւ առաջարկությունների ծրար: Իսկ ԱՊՀ-ի երկրների արտաքին գործերի նախարարների հերթական նիստը նախատեսվում է անցկացնել մարտի կեսերին Մոսկվայում: Կքննարկվեն ազգային, էթնիկական կամ կրոնական փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների ապահովման միջազգագրի նախագիծը, ինչպես նաեւ ԱՊՀ-ի խաղաղարար գործունեության մշտական կոնսուլտատիվ հանձնաժողովի ստեղծման հարցը:

Սկսվել են բանակցությունները

ՄՈՍԿՎԱ, 15 ՓԵՏՐՎԱՐԻ, ՌԻԱ ԱՐՄԵՆՊՐԵՍ: Մեծ Բրիտանիայի վարչապետ Ջոն Մեյջորի հետ Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինի հանդիպման պատճառական արարողությունը տեղի ունեցավ Կրեմլի Գեորգիեւյան դահլիճում: Ռուսաստանի Դաշնության նախագահը եւ Մեծ Բրիտանիայի վարչապետը սկսել են առանձնազրույցը: Բացելով բանակցությունների փուլը՝ Բորիս Ելցինը նշել է, որ դա իր առաջին հանդիպումը չէ Մեծ Բրիտանիայի վարչապետի հետ: Ռուսաստանի Դաշնության նախագահը վստահություն է հայտնել, որ բանակցությունները կընդանան փոխըմբռնման ոգով եւ կավարտվեն հաջողությամբ: Բրիտանիայի վարչապետի այցի շրջանակներում տեղի ունեցան բանակցություններ արտաքին գործերի նախարարներ Անդրեյ Կոզիրեւի եւ Դուգլաս Հերդի միջեւ: Կրեմլում կայացած իրենց հանդիպման ժամանակ նրանք նշեցին Ռուսաստանի եւ Մեծ Բրիտանիայի միջեւ դրական երկխոսության ինտենսիվ զարգացումը: Անդրեյ Կոզիրեւը եւ Դուգլաս Հերդը ստորագրել են կրթության, գիտության եւ մշակույթի բնագավառում համագործակցելու համաձայնագիր եւ միջազգագիր կրկնակի հարկումից խուսափելու վերաբերյալ:

Ռուսաստանի համար ձեռնտու չէ՞

ՄՈՍԿՎԱ, 16 ՓԵՏՐՎԱՐ, ԻՏԱՐ-ՏԱՍՍ ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ռուսաստանի եւ Բելառուսի դրամական համակարգերի միավորման պայմանագիրը ստորագրվելու դեպքում բացասական հետեւանքների հենց մեր երկրի համար, գտնում է Ռուսաստանի Պետական դումայի «Դեկտեմբերի 12-ի միություն» պատգամավորական խումբը, որն այսօր անցկացրեց մամլո ասուլիս: «Ֆինանսական միավորման դեպքում Ռուսաստանը կկորցնի մի քանի տրիլիոն ռուբլի», նշեց պատգամավոր Վադիմ Բոյկոն: Նրա խոսքերով, այդ ծեռնարկումը կհանգեցնի այն բանին, որ Ռուսաստանում արժեզրկումը կաճի մոտավորապես դարձյալ 5 տոկոսով:

ALFA & ISKUHI company

«ԱԼՖԱ» ԵՎ «ԻՍԿՈՒՀԻ» ֆիրմաները
առաջարկում են ուղիղ չվերթներ՝

Երեւան-Հալեպ-Երեւան
Երեւան-Արաբական Էմիրություններ-Երեւան

Չվերթների սկիզբը փետրվարի 23-ից, ամեն յոթ օրը մեկ:

Զուգահեռ առաջարկվում են անհատական եւ խմբակային տուրիստական ուղեւորություններ դեպի՝
Գերմանիա, Հոլանդիա, Բելգիա, Ֆինլանդիա, Շվեդիա, Իտալիա, Ֆրանսիա, Ավստրիա, Շվեյցարիա, Իսպանիա, Կանարյան կղզիներ, Պորտուգալիա, Անգլիա, Դանիա, Բուլղարիա, հունգարիա, Չեխիա, Թայլանդ, Շրի-Լանկա, Մալայզիա, Սինգապուր, Կորեա, Հանկ Կոնգ:

Շրջագայության համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի յնակիրդումը կկատարեն «Ալֆա» եւ «Իսկուհի» ֆիրմաները:

Երեւան, «Արաքելիր» հյուրանոց 202 գենյակ «Իսկուհի» ՍՊԸ հեռ. 23-38-21

Երեւան «Երեւան» հյուրանոց 110 գենյակ «Ալֆա» ՍՊԸ հեռ. 58-12-62

A STYLE

Եղանակը Հայաստանում

ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐ

Փետրվարի 18-ին ժամը 14-ին Անկախության հրապարակում տեղի կունենա Ազգային ինքնորոշման՝ միավորման ավանդական ազգահավաքը:

«ԻՆՏԵՐՍԵՐՎԻՍԸ»

առաջարկում է իր օգնությունը ծեփագործի եւ պատշարի մասնագիտություններով Չեխիայում աշխատել ցանկացողներին

Դիմել
Տերյան 68ա
Հեռ. 562895

ՀՀ կառավարության «Պարբերական» հրատ. տպարան, Երեւան 23 Արշակունեաց 2 Գրանցման թիվ 65. Դասիչ 69149. Տպաքանակ 15 000. Պատվեր 1695 Ստորագրված է տպագրության՝ 16. 02. 1994 Գինը՝ 100 ռուբլի

digitised by A.R.A.R.@